AZG NEW PDF.qxd 1/27/2010 11:48 PM Page 1

Ազգ Azg
28 ՅՈՒՆՈՒԱՐ 2010 ՀԻՆԳՇԱԲԹԻ 13 (4394)
ISSN: 1829-1651

# Վեհափառը շնորհավորել է բոլոր հայ զինվորներին

Հայոց բանակի 18-ամյակի կապակցությամբ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը շնորհավորել է բոլոր հայ զինծառայողներին. «Հայոց բանակի ծննդյան հետ կապված են մեր նորօրյա պատմության պանծալի հիշատակներ, մեր ժողովրդի հավատավոր, հայրենասեր ու ազատասեր, արի հոգու հաղթանակներ, որոնք պարծանքով են լցնում այս տոնական օրը եւ ոգեշնչում ու զորացնում մեզ: Արդարեւ, Արցախյան ազատամարտի եւ Հայաստանի սահմանների պաշտպանության հերոսական մարտերում կազմավորված եւ հասակ առած Հայոց բանակը հավատարիմ զավակն ու հպարտությունն է մեր ժողովրդի: Այսօր մեր Բանակի քաջարի զինվորների եւ հրամանատարների պատվախնդիր ու նվիրյալ ծառայությամբ խաղաղ են մեր Հայրենիքի սահմանները, եւ մեր ժողովուրդը իր ազատ կյանքն է կառուցում Հայաստանում եւ Արցախում», նշել է Վեհափառն ու հավելել. «Աղոթում ենք, որ Աստված խաղաղ պահպանի մեր Հայրենիքը եւ իր օրհնության ու շնորհների ներքո հավատքով ամուր, Հայրենիքի սիրով զորացյալ պահի Հայոց բանակի զորաց եւ զորականաց՝ պարգեւելով քաջառողջություն, երկար օրեր, նոր ձեռքբերումներ: Փառք ու պատիվը Հայրենիքի ծառայության մեջ է»:

# ԹՄՄ-ն պատվում է հայոց բանակի 18-ամյակը եւ ՄԱԿ-ում նորանշանակ դեսպան՝ Նազարյանին



Ճանաչված լրագրող **Ֆլորենս Ավագյանը** Նյու Յորքից հաղորդում է, որ Թեքեյան մշակութային միության Նյու Յորքի եւ Նյու Ջերսիի մասնաճյուղերի կազմակերպությամբ եւ հովանավորությամբ, Նյու Ջերսիի «Պալիսադիում» շքեղ համալիրում հունվարի 22-ին ԱՄՆ-ի արեւելյան ափի հայ համայնքների ղեկավարների, ներկայացուցիչների եւ ազգային բարերարների մասնակցությամբ տեղի է ունեցել տոնախմբություն՝ նվիրված ՄԱԿ-ում Հայաստանի նորանշանակ դեսպան Կարեն Նազարյանին եւ հայոց բանակի ստեղծման 18-րդ տարեդարձին:

Ամերիկյան եւ հայկական ազգային օրհներգերի կատարումից հետո ներկաները մեկ րոպե լռությամբ հարգել են Ղարաբաղում զոհված մարտիկների հիշատակը: Դոկտ. **Սվետլանա Ամիրխանյանը** խորհրդանշական կենաց է առաջարկել ի պատիվ բոլոր մայրերի, որոնց որդիները ծառայում են հայոց բանակում, եւ բոլոր նրանց հիշատակին, ովքեր զոհվել են հայրենիքի պաշտպանության դիրքերում:

ԹՄՄ-ի Նյու Յորքի եւ Նյու Ջերսիի մասնաճյուղերի ատենապետ **Հակոբ Վարդիվառյանը** ջերմորեն ողջունելով դեսպան Կարեն Նազարյանին եւ տիկնոջը՝ Նանային, տեղեկացրել է, որ ԱՄՆ-ում առաջին անգամ է նշվում հայոց բանակի օրը:

*Տես էջ 3*

**ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿ-18**

# Արմենական-Ռամկավար ազատական կուսակցության ուղերձը Բանակի օրվա առիթով

Հայկական բանակը 18 տարեկան է, չափահաս այս տարիքին մեր բանակը հասավ մաքառումների, դաժան ճակատամարտերի, հաղթանակների եւ զոհված հազարավոր հայ տղաների արյան գնով: Հայկական բանակն անցավ Արցախյան հերոսամարտի բովով, կոփվեց եւ մինչ օրս էլ իրավամբ համարվում է ամենամարտունակ բանակը Հարավային Կովկասում: Արցախյան պատերազմից հետո անցած խաղաղ տարիների համար մենք պարտական ենք բացառապես հայոց բանակին՝ 18-ամյա հայ երիտասարդներին, ովքեր զօր ու գիշեր հսկում են մեր երկրի անդորրը: Արցախյան դժնդակ կռիվներով անցավ եւ ձեւավորվեց բանակի սպայական կազմը, ով ապացուցեց, որ ամենաարհեստավարժն է տարածաշրջանում եւ պատրաստ է ամեն զոհողության՝ հանուն հայրենիքի խաղաղության: Եվ թեեւ մենք այսօր ապրում ենք կապույտ երկնքի ներքո, սակայն լավ ենք հասկանում, որ մեր խաղաղ գոյատեւման գրավականը հզոր հայկական բանակն է:

Հայկական պետականության համար կարեւորագույն տոնական այս օրը Արմենական-Ռամկավար ազատական կուսակցությունը իր շնորհավորանքի եւ շնորհակալության ուղերձն է հղում հայոց բանակի բոլոր զինվորներին՝ սերժանտներին, ենթասպաներին եւ սպաներին, ինչպես նաեւ գեներալներին, ովքեր անձնվիրաբար շարունակում են իրենց ծառայությունը ի հզորություն մայր հայրենիքի: Արմենական-ՌԱԿ անդամները խոնարհվում են Արցախյան ազատամարտում զոհված բոլոր հայորդիների շիրիմի առջեւ եւ երախտիքի իրենց խոսքը հղում նրանց հարազատներին եւ մտերիմներին:

ԱՐՄԵՆԱԿԱՆ-ՌԱԿ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

## Մեր բանակը տարածաշրջանի մարտունակ բանակներից է

Երեկ, Հայաստանի զինված ուժերի սպայակազմին պարգեւներ հանձնելու արարողությանը, պաշտպանության նախարար **Սեյրան Օհանյանն** ասել է. «Հայկական բանակը տարածաշրջանի մարտունակ բանակներից է: Մենք հաղթող բանակ ենք եւ կողմ ենք խաղաղությանը: Հակառակորդի ռազմատենչ հայտարարությունները մեզ ստիպում են զգոն լինել»: Այսօր Հայաստանը նշում է իր զինված ուժերի 18-ամյակը: Բանակն այն կարեւոր հենասյուներից է, որոնք խորհրդանշում են պետության կայացումը:

## Նալբանդյանը Լոնդոնից կմեկնի Օսլո

Այսօր Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը Լոնդոնում կմասնակցի Աֆղանստանին վերաբերող միջազգային կոնֆերանսին: Իսկ հաջորդ օրը՝ հունվարի 29-ին, Նորվեգիայի իր գործընկերոջ հրավերով, Նալբանդյանը կլինի Օսլոյում:

## 38 մլն դրամ՝ Վարդանյանների ընտանիքից

«Հայաստան» համահայկական հիմնադրամը երեկ տեղեկացրել է, որ «Վարդանյանների ընտանիք» բարեգործական հասարակական կազմակերպությունը 38 մլն դրամ է փոխանցել հիմնադրամի բանկային հաշվին: Նախորդ տարի Վարդանյանների ընտանիքի նվիրաբերած գումարներով 300 աշակերտի համար դպրոց է կառուցվել ԼՂՀ Մարտունու շրջանի Գիշի գյուղում:

# Բարեկամ՝ դժվար եւ հեշտ օրերին. Սարգսյան-Մոթաքի հանդիպում

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը երեկ ընդունել է Իրանի արտգործնախարար Մանուչեհր Մոթաքիին. «Դուք լավ գիտեք՝ որքան ենք կարեւորում Իրանի Իսլամական Հանրապետության հետ հարաբերությունները, գիտեք, որ մենք ձեզ ընկալում ենք որպես վստահելի գործընկերոջ եւ տարածաշրջանում առանցքային նշանակություն ունեցող երկրի: Ուստի երկկողմ հարաբերությունների զարգացումը, խորացումը բխում է մեր շահերից», կարեւորելով հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի աշխատանքը, Հայաստանի եւ Իրանի միջեւ առկա բարձր մակարդակի երկխոսությունը, անցկացվող խորհրդատվությունները՝ ասել է Հայաստանի նախագահը:

Մոթաքին էլ, իր երկրի ղեկավարի ողջույնները փոխանցելով, գոհ է մնացել միջկառավարական հանձնաժողովի երեւանյան նիստում քննարկված խնդիրների ու կայացրած որոշումների կապակցությամբ, որոնք զույգ երկրների ղեկավարների՝ նախկինում ձեռք բերված համաձայնությունների իրագործմանն են ուղղված:

Երկու երկրների բարեկամական հարաբերությունները խորացնելու քաղաքական կամքն առկա է, զարգացման հեռանկարներ եւս կան՝ «դժվար օրերի բարեկամը նաեւ հեշտ օրերի լավ բարեկամ է», համակարծիք են եղել Հայաստանի նախագահն ու Իրանի արտգործնախարարը: «Նախատեսված խոշորամասշտաբ ծրագրերի իրագործումն էապես կփոխի մեր տնտեսական փոխգործակցության պատկերը», ասել է Հայաստանի նախագահը՝ էներգետիկ, ենթակառուցվածքների եւ այլ ոլորտներում նախանշված խոշոր նախաձեռնությունների իրագործումը նկատի ունենալով:

Երեկվա հանդիպման ընթացքում անդրադարձ է եղել նաեւ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման հայկական նախաձեռնությանը, տարածաշրջանային անվտանգության եւ կայունության հրատապ խնդիրներին, ինչպես նաեւ արցախյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացի վերջին զարգացումներին ու հեռանկարներին: Նախագահ Սարգսյանը շնորհակալություն է հայտնել իրանական կողմին՝ ԼՂ կարգավորման հարցում հավասարակշիռ մոտեցում դրսեւորելու համար:

**Ս. Խ.**

**ԳՈՒՅԺ**

# Շամիրամ Աղաբեկյան



Երեկ առավոտյան անակնկալորեն կյանքից հեռացավ հանրապետության լավագույն լրագրող-քաղաքական մեկնաբաններից՝ կուսակցական գործիչ եւ մանկավարժ-դասախոս Շամիրամ Աղաբեկյանը: 1992 թ.-ից նա եղել է Ռամկավար ազատական կուսակցության եւ Թեքեյան մշակութային միության ակտիվ անդամ, վարել պատասխանատու պաշտոններ հիշյալ կազմակերպություններում, հանդիսացել է «Գոլոս Արմենիի» թերթի խմբագրի առաջին տեղակալ, «**Ազգ**» օրաթերթի քաղաքական մեկնաբան, «Ռեսպուբլիկա Արմենիա» օրաթերթի գլխավոր խմբագիր, «**Ազգ**»-ի կայքէջի խմբագիր, Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի փոխնախագահ, իսկ մինչեւ իր վաղաժամ մահը՝ Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի մշակույթի ֆակուլտետի լրագրության բաժնի դասախոս, Արմենական-ՌԱԿ «Զապել Եսայան» ակումբի ատենապետ:

Հոգեհանգիստը տեղի կունենա այսօր, հունվարի 28-ին, ժամը 18:00-ին, Օրբելի 18, բն. 21 հասցեում, իսկ հուղարկավորությունը՝ հունվարի 29-ին, ժամը 14:00-ին, նույն հասցեից:

Այս տխուր առիթով, Արմենական-ՌԱԿ հանրապետական վարչությունը, Թեքեյան մշակութային միության կենտրոնական վարչությունը եւ «Ազգ» օրաթերթի խմբագրությունը խորապես վշտակցում են հանգուցյալի որդուն՝ Վահեին եւ մյուս հարազատներին:

# «Ռուսաստանը երկշաբաթյա ժամկետ հատկացրեց Ադրբեջանին եւ Հայաստանին»

## *Թուրքական մամուլը արձագանքում է Սարգսյան-Ալիեւ հանդիպմանը*

**Հ. ՉԱՔՐՅԱՆ**

Հունվարի 25-ին Սոչիում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը վերստին հանդիպեց ադրբեջանցի պաշտոնակից Իլհամ Ալիեւի հետ: Սա նրանց՝ 2008-ի նոյեմբերից ի վեր, ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւի միջնորդությամբ իրականացված, 6-րդ հանդիպումն էր: Հանդիպումից հետո Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահներն առանձին հանդիպում ունեցան նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի մասնակցությամբ:

Սարգսյան-Մեդվեդեւ-Ալիեւ հանդիպման ավարտին կողմերի փոխարեն հայտարարությամբ հանդես եկավ ՌԴ արտգործնախարար **Սերգեյ Լավրովը**, իսկ 2-րդ հանդիպումից հետո՝ Մինսկի խմբի ռուս համանախագահ **Յուրի Մերզլյակովը**: Սա նշանակում է, որ ինչպես Սարգսյան-Ալիեւ հանդիպման, այնպես էլ երկու երկրների նախագահների Մինսկի խմբի մասնակցությամբ վարած բանակցությունների նախաձեռնությունը պատկանել է Ռուսաստանին, ինչը ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում ռուսական գործոնի հարաճուն ազդեցության վկայությունն է:

Թերեւս դա է պատճառը, որ թուրքական մամուլը հենց այդ ազդեցության տեսանկյունից է մոտենում Սարգսյան-Ալիեւ հանդիպմանը՝ լուսաբանելով դա Լավրովի եւ Մերզլյակովի հայտարարությունների համատեքստում: Խոսքը տվյալ դեպքում Նյու Յորքի թուրքական կայքէջի, հանրային հեռուստատեսության եւ կենտրոնական թերթերի մասին է, որոնցից «Զամանը» Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպումը լուսաբանել է «Ռուսաստանի ակնկալիքները չարդարացան», իսկ կայքէջը՝ «Մասնակի առաջխաղացում ղարաբաղյան բանակցություններում. Ռուսաստանը երկշաբաթյա ժամկետ տվեց Ադրբեջանին եւ Հայաստանին» վերնագրերով:

*Տես էջ 3*

AZG NEW PDF.qxd 1/27/2010 11:43 PM Page 1



# Մեկուկես միլիոն ծառ՝ ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին

Ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված՝ Համաշխարհային հայկական կոնգրեսի կազմակերպելիք հիշատակի արարողությունները բազմաթիվ են:

Առաջնահերթ իրազեկել մարդկությանը դարասկզբի ամենասարսափելի ոճրի մասին ու փաստել, որ 1915-ը միայն հայկական ցավը չէ, այլ համամարդկային ողբերգություն է: Պետք է հիշել, որպեսզի ապրես, պետք է հիշել, որպեսզի արարես, կառուցես քո երազանքի պետությունը: Այս խոսքերով են առաջնորդվում Համաշխարհային հայկական կոնգրեսի երիտասարդական կազմակերպությունների ասոցիացիայի ներկայացուցիչները, որոնք մտադրվել են Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին հանրապետությունում տնկել մեկուկես միլիոն ծառ՝ հավերժացնելու ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակը:

Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության փոխնախագահ **Վլադիմիր Աղայանը** նկատում է, որ միջոցառումն ինքնանպատակ չէ:

«Պետք է շատանա հայոց ցեղասպանությունն ընդունող ու դատապարտող միջազգային կազմակերպությունների ու պետությունների թիվը, եւս մեկ անգամ ապացուցելու, որ Հայոց ցեղասպանությունը վերաքննության, հաստատման կարիք չունի, այն պատմական փաստ է: Իսկ դրան հասնելու համար պետք է իրազեկենք համաշխարհային հանրությանը, ներկայացնենք պատմությունը: Սովորաբար սպասում ենք, երբ գալիս է ապրիլ ամիսը, պսակներ ենք դնում ու դրանով սահմանափակվում, բայց դա բավարար չէ: Սիլվա Կապուտիկյանը հրաշալի խոսք ունի. «Պետք է հիշես ապրելու համար», մենք էլ ավելացնում ենք՝ նաեւ գործելու, արարելու ու երկիրը կառուցելու: Այս կտրվածքով հինգ տարին այնքան էլ մեծ ժամանակահատված չէ», **«Ազգի»** հետ զրույցում ասաց Վլադիմիր Աղայանը:

Համաշխարհային հայկական կոնգրեսի երիտասարդական կազմակերպությունների ասոցիացիայի փոխնախագահ **Մարիամ Մարտիրոսյանն** էլ նկատում է, որ Հայոց ցեղասպանության 95-րդ տարելիցին Կոնգրեսը Հայաստանում եւ սփյուռքում իրականացնելու է արդեն ավանդական դարձած բազմաթիվ միջոցառումներ:

«Տնկի՛ր անմեղ նահատակի հիշատակի քո ծառը» շարժումը յուրահատուկ բարոյական հոգեհանգիստ կլինի ցեղասպանության յուրաքանչյուր զոհի հիշատակին, այն նաեւ մեծ խորհուրդ է պարունակում», ասաց Մարտիրոսյանը:

Շարժման մեկնարկը կտրվի այս տարի: Նախատեսվում է Երեւանում հիմնել «Վերածննդի» այգի:

Մարտիրոսյանը պատմեց, որ Կոնգրեսի նախաձեռնությամբ արդեն մի քանի տարի Հայոց ցեղասպանության թեմայով սփյուռքում կազմակերպվում են բազմաբնույթ միջոցառումներ:

«Հինգ երկրում կազմակերպվել է ավտոարշավ, որի նպատակն էր հասարակության ուշադրությունը սեւեռել Հայոց ցեղասպանության խնդրին: Սփյուռքում կլինեն դասախոսություններ, քննարկումներ, թատերական ներկայացումներ», ասաց նա:




«Յուրաքանչյուր նախաձեռնություն, որ կազմակերպում է հատկապես երիտասարդությունը, ողջունելի է: Երիտասարդությունը չի կարող վրիպել, որովհետեւ նա «թարմ օդ» է շնչում, ուղիղ հայացքով է նայում ապագային: Ծառ տնկելը, շաղկապելը ցեղասպանության հետ մեծ խորհուրդ ունի: Այդ խորհրդով առաջնորդվենք, սա է իսկական ճանապարհը: Ամեն մի ծառ տնկելը նշանակում է ազգի կենսունակության պահպանում: Մնում է միայն մի բան ցանկանալ, որ այդ ծառերը խնամվեն», ասաց Ժուռնալիստների միության նախագահ **Աստղիկ Գեւորգյանը**:

ԳԱԱ-ում հավաքված երիտասարդներն էլ խոստացան, որ ոչ միայն ծառ են տնկելու, այլեւ հետեւելու են խնամքին, մաքրությանը: Այս հարցում նրանք իշխանության տարբեր օղակների կարիքը կզգան, ոռոգման ջուր ապահովելու եւ այլնի համար: Այդ կապակցությամբ երիտասարդները հանդես եկան կոչով՝ առաջարկելով երիտասարդությանը մասնակցել ցեղասպանության 100-ամյա տարելիցի միջոցառումներին, իրենց գործունեությամբ դառնալ Հայաստանի հզորացման, պետականության վերելքի ու զարգացման աջակիցը:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# «Հայաստանի Հանրապետական կուսակցություն», «Բարգավաճ Հայաստան» եւ «Օրինաց երկիր» խմբակցությունների հայտարարությունը

**ՀՀ Ազգային ժողովի ղեկավարության ուշադրությունն ենք հրավիրում ԵԽԽՎ նորընտիր նախագահ Մովլութ Չավուշօղլուի՝ ս.թ. հունվարի 26-ին ադրբեջանական APA լրատվական գործակալությանը տրված հարցազրույցին, որում Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի նորընտիր նախագահը հանդես է եկել կանխակալ տեսակետներով Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի առնչությամբ: Վեհաժողովի նախագահի կողմից «իրականության» որոշ մեկնաբանություններ հարցականի տակ են դնում նրա անկողմնակալությունը Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի ընկալման հարցում: ԵԽԽՎ նախագահը լավ չի ընկալում հակամարտության բնույթն ու տարրերը, ինչպես նաեւ վերջինիս շուրջն ընթացող բանակցային գործընթացը: Նա ակնհայտորեն նախընտրում է անտեսել այն փաստը, որ խաղաղ կարգավորումը հիմնված է մի քանի սկզբունքների հետամուտ լինելու վրա, որոնց թվում է նաեւ ինքնորոշման սկզբունքը: Ինչպես երեւում է, նախագահը նաեւ անտարբերությամբ է վերաբերվում Լեռնային Ղարաբաղի ժողովրդի անվտանգությանն առնչվող հիմնահարցերին, որոնք մշտապես վտանգված են Ադրբեջանի իշխանությունների կողմից, ներկայումս նաեւ հայերի հանդեպ ատելություն եւ այլատյացություն քարոզելու միջոցով:**

**Ավելին, ցավում ենք, որ հենվելով հիմնահարցի առնչությամբ Թուրքիայի դիրքորոշմանը եւ շեշտելով, որ. «Այս հակամարտությունը կարծես խոչընդոտում է Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ հարաբերությունների կարգավորմանը»՝ նախագահը լրջորեն հարցականի տակ է դնում իր պաշտոնավարության հեղինակությունը տարածաշրջանային խնդիրների լուծման հարցում առհասարակ որեւէ դրական դերակատարում ունենալու տեսանկյունից:**

**Այս հարցազրույցը եւս մեկ անգամ հաստատում է, որ բանակցություններ վարելը միայն լիազորված մարմնի, այս պարագայում ԵԱՀԿ եւ վերջինիս Մինսկի խմբի համանախագահության իրավասությունն է, եւ այն, որ այս ձեւաչափից դուրս ցանկացած անպատասխանատու ձեռնարկում միայն ավելի բարդացնում եւ վնասում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման բանակցային գործընթացը:**

**Հաշվի առնելով վերոգրյալը, Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական կուսակցություն», «Բարգավաճ Հայաստան» եւ «Օրինաց երկիր» կոալիցիոն խմբակցությունները հորդորում են Ազգային ժողովի նախագահին ԵԽԽՎ նախագահից ճշտել տարածված հարցազրույցի իսկությունը, բացատրություններ պահանջել պարոն Չավուշօղլուից, հասկանալ, արդյո՞ք նրա խոսքերը կարելի է համարել ԵԽԽՎ պաշտոնական դիրքորոշում եւ հարկ եղած դեպքում լրջորեն քննարկել Մովլութ Չավուշօղլուի նախագահության շրջանում ԵԽԽՎ-ի աշխատանքներին Հայաստանի մասնակցությունը սառեցնելու հարցը:**

*ՀՀ Ազգային Ժողովի «ՀՀԿ» խմբակցություն*
*ՀՀ Ազգային Ժողովի «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն*
*ՀՀ Ազգային Ժողովի «Օրինաց երկիր» խմբակցություն*

ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿ-18

# Ուղերձ



Հայոց բանակի կազմավորման 18-րդ տարեդարձը համայն հայության տոնն է:

Հայ ժողովրդի նորագույն պատմության մեծագույն ձեռքբերումներից մեկը հայոց բանակն է, որը կազմավորվեց ու կայացավ երկրի ու ժողովրդի համար չափազանց պատասխանատու ժամանակահատվածում:

Դարեր շարունակ չունեինք պետություն ու պետականություն: Պահպանվել էր միայն հայի անկախության ու ազատության գաղափարը: Սակայն մեր ժողովուրդն իր ոգու եւ կամավորականների խիզախության շնորհիվ ամրագրեց անկախության ձգտումը, ռազմադաշտի հաջողությունները. պետության սահմանները, բանակի անպարտելիությունն ու այսօրվա խաղաղությունը: Խաղաղություն, որ ապահովում է երկրի ու տնտեսության բնականոն զարգացում, որի գրավականն ու պահապանը մեր հզոր բանակն է՝ ծնված երկրապահի ոգու եւ ժողովրդի սիրո շաղախից:

Բանակի կազմավորման 18-րդ տարեդարձի առիթով շնորհավորում եմ ողջ հայ ժողովրդին՝ Հայաստանի, Արցախի, աշխարհասփյուռ հայությանը, այս վեհ նպատակի համար զոհվածների ընտանիքներին, զինվոր ծնող մայրերին, հատկապես երկրի սահմանները պահող զորքերին եւ նաեւ նրանց, ովքեր վաղը պատիվ կունենան հագնել հայոց բանակի համազգեստը:

Միասնական ժողովուրդն ու հզոր եւ միշտ պատրաստ բանակն է՝ երկրի կայունության ու խաղաղության ամուր երաշխիքը: Ինչպես Սպարապետ Վազգեն Սարգսյանն էր ասում՝ «Բանակն է ազգային միասնականության օջախը»:

Արժանի ու պատշաճ լինենք այս պատգամին, միասնական եւ արժանավայել շարունակենք դիմակայել նոր մարտահրավերներին: Հավատանք ինքներս մեզ, մեր պետությանը ու հաստատակամ լինենք վերջնական հաղթանակի հասնելու գործում:

Մեր ուժը մեր բանակի ու ժողովրդի միասնության մեջ է:

ԵԿՄ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ,
ԱՐՑԱԽԻ ՀԵՐՈՍ,
ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ՝
Մ.Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

# Չավուշօղլուից վախենալ պետք չէ



**Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) նորընտիր նախագահ Մովլութ Չավուշօղլուն վերջերս ադրբեջանական «ԱՊԱ» գործակալությանը հարցազրույց էր տվել, որտեղ ցուցաբերել է բավական միակողմանի դիրքորոշում ինչպես հայ-թուրքական գործընթացների, այնպես էլ Ղարաբաղի հետ կապված: Այս փաստը, բնականաբար, չէր կարող չանհանգստացնել ԵԽԽՎ-ում Հայաստանի պատվիրակությանը. ազգությամբ թուրք Չավուշօղլուն կարող է իր դիրքորոշումները գործի կոչել: Այս առիթով «Պանորամա.ամ» կայքը հարցազրույց է վերցրել ԵԽԽՎ-ում Հայաստանի մշտական ներկայացուցիչ Զոհրաբ Մնացականյանից: Անդրադառնալով Չավուշօղլուի հայտարարություններին՝ Մնացականյանը նշել է, թե նախ վստահ չէ, որ թուրք պատգամավորը հենց նման բաներ է ասել. «Բայց եթե դա համապատասխանում է իրականությանը, ապա, կարծում եմ, եւ բոլորս էլ հասկանում ենք դա, նման կողմնակալ դիրքորոշումը հանում է բոլոր հիմքերը ԵԽԽՎ նախագահի համար՝ դրական դեր խաղալու ղարաբաղյան հակամարտության կարգավորման մեջ»: Մնացականյանը ավելացրել է նաեւ, որ ԵԽԽՎ-ում հայկական պատվիրակությունն արդեն քայլեր է ձեռնարկում իրավիճակի հետ կապված հստակեցումներ մտցնելու եւ համապատասխան գործողություններ ձեռնարկելու ուղղությամբ:**

**Իսկ «Պանորամա»-ի այն հարցին, որ եթե Չավուշօղլուն իրոք նման բան ասել է, ապա Հայաստանն ի՞նչ է անելու միջազգային հանրությանը տեղյակ պահելու, որ թուրք պատգամավորն իր պաշտոնն օգտագործում է հայրենի երկրի եւ նրա դաշնակիցների նեղ շահերին ծառայելով, Մնացականյանը պատասխանել է. «Երբ մենք ճշտենք, կհստակեցնենք նաեւ բոլոր մանրամասները, դրանից հետո, բնականաբար, քայլեր կձեռնարկենք, վստահեցնում եմ նաեւ, որ մենք հանդիպում կունենանք նաեւ անձամբ Չավուշօղլուի հետ»:**

Հ. Ա.

**Երեկ ուշ գիշեր ՀՀ ԱԺ հասարակության եւ տեղեկատվության միջոցների հետ կապերի վարչությունը տեղեկացրեց, որ ԵԽԽՎ-ում ՀՀ ԱԺ պատվիրակությունը եւ դեսպան Զոհրաբ Մնացականյանը հանդիպել են Մեվլութ Չավուշօղլուի հետ եւ բացատրություն պահանջել ԱՊԱ-ին տված հարցազրույցի կապակցությամբ: Չավուշօղլուն պարզաբանել է, որ ադրբեջանական ԱՊԱ գործակալությունը մեկնաբանել է իր խոսքերը, որի արդյունքում խեղաթյուրվել է իր ասածի իմաստը:**

*(Հաղորդագրությունն ամբողջովին կարող եք կարդալ «Ազգ»-ի կայքէջում)*

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԸ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 1/27/2010 10:45 PM Page 1



# ԹՄՄ-ն պատվում է հայոց բանակի 18-ամյակը եւ ՄԱԿ-ում նորանշանակ դեսպան՝ Նազարյանին



*1-ին էջից*

Հանդիսությանը ներկա են եղել Վաշինգտոնում Հայաստանի դեսպանատան պաշտպանության գծով կցորդ փոխգնդապետ Մեսրոպ Նազարյանը իր տիկնոջ՝ Ռուզաննայի հետ, Վաշինգտոնում Ղարաբաղի ներկայացուցիչ Ռոբերտ Ավետիսյանը, ԹՄՄ-ի կենտրոնական վարչության փոխատենապետ Երվանդ Ազատյանը, բարերար Անդրեաս Ռուբյանը՝ Պրիյա Կատրագադդայի հետ, դոկտ. եւ տիկին Մարիան Հուսեփյանները, Նազար եւ Արտեմիս Նազարյանները, Էդուարդ եւ Կարմեն Գյուլբենկյանները, Վահրամ եւ Լյուսիեն Այնիլյանները, դոկտ. Րաֆֆի եւ Վիքի Հովհաննիսյանները, Բաբկեն եւ Անահիս Մկրյանները, Վան եւ Պրիսիլա Գրիգորյանները, Սարգիս եւ Մարալ Ջեբեջյանները եւ դոկտ. Գյուլեֆյանը:

«ԹՄՄ-ն իսկական մշակութային կազմակերպություն է, որն ավելի քան որեւէ այլ կամակերպություն, պահպանում է հայոց լեզուն: Այս միջոցառումը բոլորիս համար է: Հայաստանը 15 նահանգներ ունի պատմական Հայաստանում, որոնցից չորսն արդեն ազատագրված են», իր խոսքում ասել է **Հակոբ Վարդիվառյանը**, հպարտությամբ ավելացնելով, որ առաջիկա տասնամյակներում մյուսներն էլ են ազատագրվելու: Նա հատկապես նշել է հաջողակ ձեռնարկատեր, դասախոս, արվեստի գործերի հավաքորդ եւ 1980-90-ականներին ԱՄՆ-ում գործող «Ղարաբաղ» կոմիտեի ատենապետ Անդրեաս Ռուբյանի անունը, ով անխոնջ նվիրվածությամբ օգնել է Ղարաբաղի զինվորներին: Այդ կոմիտեն նաեւ բազում բարեգործական միջոցառումներով օգնել է այրիացած կանանց, որբացած երեխաներին եւ պատերազմից ողջ մնացածներին:

Իր պատասխան ելույթում Ռուբյանը նշել է, որ սփյուռքահայերից ոմանք սկզբնական շրջանում համամիտ չեն եղել կոմիտեի ստեղծման գաղափարին, բայց Քելբաջարի ազատագրումից հետո վերանայել են իրենց դիրքորոշումը:

«Այս հաղթանակը երեւույթ էր, քանի որ մինչ այդ գործող անկազմակերպ խմբավորումը դարձավ կազմակերպված, կանոնավոր բանակ եւ ապացուցեց, որ Հայաստանը, Ղարաբաղը եւ սփյուռքը միասնական են», ասել է նա ծափողջյունների տարափի ներքո, ավելացնելով. «Մենք միշտ ենք միասնական լինելու եւ հաղթելու ենք»:



Այնուհետեւ ցուցադրվել է հայկական փառապանծ բանակի մասին պրոֆեսիոնալ մակարդակով արված մի տեսաֆիլմ:

ՄԱԿ-ում Հայաստանի նորանշանակ դեսպան Կարեն Նազարյանը, որը նախկինում Ռուսաստանում, Ժնեւում եւ Իրանում դիվանագիտական հարուստ փորձ է կուտակել, հարգանքի տուրք մատուցելով հայկական բանակին, այն անվանել է «Հայկական պետականության ամենակարեւոր կառույցներից մեկը, որն իրականություն դարձավ աշխարհասփյուռ հայերի անսասան նվիրվածության եւ տքնաջան ջանքերի շնորհիվ»: «Մեր մարտիկների հերոսական սխրանքները եւ 18-ամյա պատմությունը մեր բանակի հայրենասիրության հրաշալի դասեր են հաջորդ սերունդների համար: Այսօր հայկական բանակն իրավամբ դիտվում է որպես հաղթական եւ ազատագրական բանակ: Մեր ժողովուրդը վստահում եւ հավատում է մեր բանակին, որը տարիների ընթացքում մշտապես բարելավվել է, ամրացել եւ նորացվել: Այսօր հայկական բանակը մեր խաղաղ կյանքի գլխավոր երաշխավորն է եւ կարեւոր գործոնը՝ տարածաշրջանի կայունության ու անվտանգության: Վստահ ենք, որ բանակը շարունակելու է պատվով կատարել իր պարտավորությունները», ասել է նա, շնորհավորելով ամերիկահայ համայնքի բոլոր այն անձանց, ովքեր իրենց անգնահատելի ներդրումն են ունեցել հայկական բանակի կայացման եւ հզորացման գործում: «Թող Աստված պահպանի մեր բանակը: Փառք մեր հայ զինվորներին եւ կեցցեն Հայաստանի Հանրապետությունն ու հայկական սփյուռքը», հնչեցրել է նա ներկաների հոտընկայս ծափահարությունների ներքո:

Տոնախմբությունը եզրափակել է Հայաստանյայց եկեղեցու Արեւելյան թեմից ծայրագույն վարդապետ Հայկազուն Նաջարյանը, որ ներկայացրել է Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանին, որը չի կարողացել ներկա գտնվել միջոցառմանը հոր մահվան պատճառով: «Երբ նշում ենք մեր ռազմական հաջողությունները եւ հպարտանում, դա մեզ հավատ է ներշնչում մեր ապագայի հանդեպ: Պատերազմները միայն մարտադաշտում չեն մղվում, դրանք մղվում են տարբեր ոլորտներում, ներառյալ դիվանագիտական ոլորտում, եւ մենք այսօր ուրախ ենք, որ ՄԱԿ-ում ունենք Կարեն Նազարյանի նման մի դեսպան, որ առաջ է տանում այդ կարեւոր պայքարը: Մենք նրան ամենայն հաջողություն ենք մաղթում», ասել է նա:

Երեկոն հագեցած է եղել նաեւ մշակութային հարուստ ծրագրով, որին մասնակցել են Նորա Արմանին, Ժիրայր Փափազյանը (որոնք մեծ հաջողությամբ վերջերս Նյու Յորքում ելույթ են ունեցել), ջազային ժանրի ջութակահար Ժաննա Սարյանը, երգչուհի Անի Ջերջերյանը՝ Վաղարշակ Օհանյանի դաշնամուրային ընկերակցությամբ եւ «Աղթամար» պարային համույթը գեղարվեստական ղեկավար Սիլվա Ասատուրյանի առաջնորդությամբ:

Տոնախմբության հաջողությանը մեծապես նպաստել են ԹՄՄ-ի Նյու Յորք, Նյու Ջերսի մասնաճյուղերի ատենապետ Հակոբ Վարդիվառյանը, փոխատենապետ Հարութ Չաքմաքճյանը, քարտուղարուհի Բեթի Սալբաշյանը, գանձապետուհի Սիրվարդ Տեմիրճյանը, խորհրդականներ դոկտ. Սվետլանա Ամիրխանյանը, Շմավոն Ադամյանը, Շողիկ Շալյանը, Լուսինե Ճերճերյանը, Վարդան Իլանջյանը, Մելինե Խեկոյանը եւ Գրիգոր Մարգարյանը:

Թարգմ. Հ. Ծ.

ՊՈԼԻՍ

## «Ճգնաժամ պատրիարքական ընտրություններում»

Այդ մասին հունվարի 27-ի համարում գրում է թուրքական «Հյուրիեթ» թերթը: Խոսքը Կ. Պոլսո հայոց պատրիարքի ընտրության մասին է: Ինչպես հայտնի է, դեռեւս 2009-ի մարտի 2-ին Պոլսո հայոց պատրիարքարանի հոգեւոր խորհուրդը աթոռակից պատրիարքի ընտրության մասին որոշում էր ընդունել: Խորհրդի ղեկավար **Արամ արք. Աթեշյանը**, հանդիպելով 2009-ի նոյեմբերի 6-ին Թուրքիայի վարչապետ Էրդողանի հետ, պաշտոնապես ազդարարել էր ընտրությունների նշանակման մասին:

2009-ի դեկտեմբերի 3-ին պատրիարքի տեղապահ **Շահան արք. Սվաճյանը** Աթեշյան սրբազանի հետ աթոռակից պատրիարքի ընտրության համար թույլտվություն ստանալու դիմում էր ներկայացրել Ստամբուլի նահանգապետարան, որովհետեւ առանց դրա անհնար է ընտրությունների անցկացումը: Դրան հետեւել էր աթոռակից պատրիարքի ընտրության նախաձեռնող հանձնաժողովի կազմավորումը: Սակայն այս հանձնաժողովը հունվարի 14-ին նոր դիմում է ներկայացնում Ստամբուլի նահանգապետարան, մատնանշելով, որ առաջիկա ընտրությունները պատրիարքական են, այլ ոչ թե աթոռակից պատրիարքի: Ահա այս դիմումն իրարանցում է առաջացնում հայ համայնքում:

Դիմումին հաղորդագրությամբ արձագանքում է պատրիարքարանի հոգեւոր խորհուրդը, որտեղ ընդգծվում է նախաձեռնող հանձնաժողովի արարքի անհամատեղելիությունը Հայ առաքելական եկեղեցու 1700-ամյա ավանդույթների հետ, արարքը համարվում է խիստ մտահոգիչ եւ ասվում. «Ընտրություններին առողջ ընթացք տալու համար անհրաժեշտ է հոգեւոր խորհրդի եւ նախաձեռնող հանձնաժողովի սերտ համագործակցությունը: Ներկա պահին ընտրությունները մթագնել են: Անվստահության այս մթնոլորտում չկան առողջ ընտրություններ անցկացնելու համար անհրաժեշտ նախադրյալներ»:

Տեղեկացնելով այս ամենի մասին, թուրքական թերթը միաժամանակ նշում է, որ աթոռակից պատրիարքի ընտրության համար առաջադրվել էր Արամ արք. Աթեշյանի, Գարեգին արք. Բեկչյանի եւ Սեպուհ եպս. Չուլջյանի թեկնածությունը:

Հ. Զ.

## «Ռուսաստանը երկշաբաթյա ժամկետ հատկացրեց...»

*1-ին էջից*

Առաջխաղացման ենթադրության համար թուրքական կայքէջը հիմք է ընդունել Լավրովի խոսքերը, թե Հայաստանն ու Ադրբեջանը համաձայնության են եկել ղարաբաղյան հակամարտության կարգավորման փաստաթղթի նախաբանի շուրջը, կա նախաբանի վերաբերյալ միասնական ընկալում, որը վերակառուցվել եւ արդիականացվել է համապատասխան «Մադրիդյան սկզբունքներին», ապա եւ վերջինը ավելացրել. «Սակայն կողմերն, այնուամենայնիվ, կաշխատեն տեքստի վրա, կներկայացնեն իրենց սեփական առաջարկներն ու կոնկրետ ձեւակերպումները»:

Ինչ վերաբերում է **Մերզլյակովին**, ապա նա, ըստ նույն կայքէջի, ասել է. «Ակնկալում ենք, որ կողմերը երկու շաբաթվա մեջ իրենց առաջարկները կներկայացնեն ԼՂ հակամարտության կարգավորման «Մադրիդյան սկզբունքների» այն կետերի շուրջը, որոնց վերաբերյալ դեռեւս համաձայնության չեն եկել»: Հակառակ կայքէջի «մասնակի առաջխաղացման» հետեւությանը, «Զամանը», վկայակոչելով բանակցային գործընթացին մոտ կանգնած աղբյուրներ, նշում է, որ Սարգսյան-Ալիեւ հանդիպման արդյունքները լավատեսություն չեն ներշնչում, շարունակելով. «Հատկապես բացասական էին ադրբեջանական կողմի տպավորությունները, իսկ դա թերեւս պայմանավորված է Հայաստանի նախագահի պաշտոնական կայքէջում հրապարակված քարտեզով, որտեղ օկուպացված Ղարաբաղն ընդգրկվել է Հայաստանի կազմում»:

Թուրքական թերթն այնուհետեւ ավելացնում է. «Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը դեռեւս հանդիպումից առաջ հայտարարեց, որ 2010-ին չպետք է զարգացում ակնկալվի ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում»: Սարգսյան-Ալիեւ հանդիպմանն անդրադարձել է նաեւ NTVMSNBC-ն, նշելով, որ Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները համաձայնության են եկել բանակցությունների առաջիկա փուլում՝ որպես կողմ կարգավորման գործընթացին Լեռնային Ղարաբաղի մասնակցության հարցում:

Այս հեռուստակայանը, վկայակոչելով ռուսական աղբյուրներ, միաժամանակ կարծիք է հայտնում, որ կարգավորման փաստաթուղթն ինքնորոշման իրավունք է վերապահում Ղարաբաղի ժողովրդին: Թուրքական թերթերը շրջանցում են բանակցություններին ղարաբաղյան կողմի մասնակցության, ինչպես նաեւ Ղարաբաղի ժողովրդին ինքնորոշման իրավունք տրամադրելու հանգամանքները: Թերեւս թուրքական կայքէջն է գրում բանակցություններին Լեռնային Ղարաբաղի հնարավոր մասնակցության մասին, սակայն այս տեղեկությունը վերագրում է հայկական աղբյուրներին:

## Եվրոբանկը «Արմսվիսբանկին» տրամադրեց 8 մլն դոլար

### *5 մլն դոլար՝ ՓՄՁ-ի, 3 մլն դոլար առեւտրի ֆինանսավորման համար*

Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկը (ՎԶԵԲ) եւ հայկական «Արմսվիսբանկը» երեկ երկու պայմանագիր կնքեցին: Առաջինը՝ 5 մլն դոլար արժողությամբ, որը Եվրոբանկը կտրամադրի «Արմսվիսբանկին» փոքր եւ միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) ֆինանսավորման համար, եւ երկրորդը՝ 3 մլն դոլար արժողությամբ, առեւտրի ֆինանսավորման համար: Պայմանագրերը ստորագրեցին «Արմսվիսբանկի» գործադիր տնօրեն **Գեւորգ Մաչանյանը** եւ ՎԶԵԲ-ի ներկայացուցիչը Հայաստանում **Վալերիու Ռազլոգը**:

Իր գոհունակությունը հայտնելով ստորագրած պայմանագրերից, «Արմսիսբանկի» գործադիր տնօրեն Գեւորգ Մաչանյանը նշեց, որ դրանք բանկի համար ռազմավարական նշանակություն ունեն: Նա նաեւ հայտնեց, որ եկող տարի «Արմսվիսբանկը» ծրագրում է շուրջ 45 տոկոսով ավելացնել վարկավորման ծավալները, եւ ՎԶԵԲ-ից ստացված այս միջոցները կնպաստեն այդ ծրագրի իրականացմանը:

ՎԶԵԲ-ի ներկայացուցիչ Վալերիու Ռազլոգը հատկանշական համարեց այս պայմանագիրն այն առումներով, որ Եվրոբանկի կնքած առաջին պայմանագիրն է «Արմսվիսբանկի» հետ եւ այս տարվա առաջին պայմանագիրն է, որ կնքվում է հայկական բանկի հետ: Նա ընդգծեց, որ ՎԶԵԲ-ի ռազմավարությունը Հայաստանի բանկային համակարգի ամրապնդումն է:

Կենտրոնական բանկի փոխնախագահ **Վաչե Գաբրիելյանը** շատ կարեւոր համարեց փոքր եւ միջին ձեռնարկատիրության վարկավորման ծրագիրը: Նա նշեց, որ անցյալ տարի հայկական բանկերը կարողացել են էապես ավելացնել ՓՄՁ-ի ֆինանսավորումը: Այդ նպատակով բանկերին է տրվել ռուսական վարկի, միջազգային ֆինանսական կառույցներից ստացած միջոցների մի զգալի մասը:

Մամուլի ասուլիսին ներկայացվեցին նաեւ վարկավորման պայմանների այլ մանրամասներ: Տեղեկացվեց, որ ՓՄՁ-ների համար տրամադրվող վարկերը, եթե ձեռնարկությունները համապատասխանում են ծրագրի պայմաններին, տրամադրվում են մինչեւ 5 տարի ժամկետով, 500 հազար դոլար գումարը չգերազանցող չափով, 14-16 տոկոս միջին տոկոսադրույքներով: Վարկավորման համար կարող են դիմել այն ընկերությունները, որոնց աշխատակիցների քանակը չի գերազանցում 250-ը, որոնք մտադիր են ներդնել արտադրության արդյունավետությունը բարձրացնող նոր տեխնոլոգիաներ, ունեն արտահանման կամ ներմուծմանը փոխարինող ուղղվածություն:

Առեւտրի ֆինանսավորման պայմանագրով բանկը կարող է թողարկել երաշխիքներ, ակրեդիտիվներ, տրամադրել առեւտրի ֆինանսավորման այլ գործիքներ, իրականացնել ֆակտորինգային գործառնություններ:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

AZG NEW PDF.qxd 1/27/2010 10:46 PM Page 1



# Ռուսական մամուլ

# Նպաստել են ռուսական հաղթանակներին

## *Լրանում է Ռուսաստանում հայերի առաջին բնակության 950 տարին*

### Ինչ կլիներ...

Ոչ այն է, թե իսկապես տգիտությունն ու բռիությունն է շատանում, ոչ այն է, թե այդ ամենը կանխամտածված է տեղի ունենում, բայց փաստ է, որ ավելի ու ավելի հաճախ են մոռացության տրվում պատմական այնպիսի փաստեր, որոնք ճակատագրական են ողջ ժողովուրդների համար:

2008 թվականին լրացավ Ռուսական կայսրության կողմից Հայաստանի արեւելյան հատվածի, որ արդեն հինգ դար գտնվում էր Պարսկաստանի եւ Թուրքիայի տիրապետության տակ, գրավման 180 տարին: Այսպես գոյացավ Էրիվանի նահանգը, որ հետո դարձավ Հայկական ԽՍՀ, 1991-ից՝ Հայաստանի Հանրապետություն:

Որպեսզի հասկանանք պատմական այդ պահի ծանրակշիռ նշանակությունը, բավական է հիշեցնենք. այն տարածքը, որ բռնագրավել էին թուրքերը եւ որն, այնուամենայնիվ, մինչեւ 1915 թվականը համարվում էր Արեւմտյան Հայաստան, հայ ժողովրդի գենոցիդի հետեւանքով, որը կատարվեց Գերմանիայի եւ Մեծ Բրիտանիայի թողտվությամբ, եթե չասենք խրախուսումով ու քաջալերումով, գործնականորեն վերջնականապես մնում է Թուրքիային: Իսկ եթե Ռուսաստանն այստեղ էլ աներ նույնը, ինչ որ Պարսկաստանում, ոչ մի գենոցիդ էլ չէր լինի: Եվ իրական կլիներ ոչ թե աշխարհի ամենափոքր երկրներից մեկը, այլ Մեծ Հայաստանը: Արարատ լեռան երկու կողմում: Ծովային սահմաններով... Բայց եվրոպացիներն ընդդիմացան, չուզեցին...

Հայերը, փառք աստծո, հեռու են իրենց պատմության սրբապիղծ նենգափոխումից եւ խարդախումից, ինչ արվում է այսօր Վրաստանում: Միայն թե մտածում ենք, որ հայերին էլ օգտակար կլիներ մտածել հետեւյալ հարցի շուրջը. եթե 1828 թվականին Ռուսաստանը չաներ պարսիկների ու թուրքերի զավթած հայկական տարածքների իր, ըստ էության, ազատագրական առաքելությունը, այսօր առհասարակ գոյություն կունենա՞ր Հայաստան երկիրը:

Բայց եւ մեզ Ռուսաստանում չէր խանգարի պարբերաբար թարմացնել մեր պատմական հիշողությունը, որպեսզի սխալներ թույլ չտանք եւ արժանին հատուցենք մեր իսկական, ժամանակի փորձությունը բռնած բարեկամներին:

### Մի շարք փառավոր անուններ

Ե՞րբ են հայերը հայտնվել Ռուսաստանում: Դիմենք հայոց պատմության նշանավոր գիտակ **Մագդա Նեյմանին**, որ ապրել է 19-րդ դարում Սանկտ Պետերբուրգում. «Հայերը Ռուսաստան են եկել զենքը ձեռքներին, 11-րդ հարյուրամյակի առաջին կեսին, Կիեւի մեծ իշխանի հրավերով, որն այդ ժամանակ պատերազմի մեջ էր լեհերի դեմ: Այդ ժամանակ Կիեւի մեծ իշխանը դիմում է հայոց իշխաններից մեկին, խոստանալով նրա կողմնակիցներին զանազան արտոնություններ: Հայերը 1060 թվականին ընդունել են մեծ իշխանի հրավերը եւ բնակություն հաստատելով Կիեւում եւ, նրա մերձակայքում, Կիեւի իշխանությանը մատուցել են մեծագույն ծառայություններ ինչպես զենքով, այնպես էլ տարբեր արհեստների զարգացումով»: Իսկ ռուսական տարեգրություններում ասված է, որ առաջին այդ հայ նորաբնակների միջից դուրս են եկել մեծաթիվ հմուտ բժիշկներ: Նրանցից մեկը բուժում էր Վլադիմիր Մոնոմախին:

Մագդա Նեյմանը 1895 թ. գրում է. «Հետագա հինգ հարյուրամյակում հայերը <...> գտնվել են պարսիկների եւ թուրքերի ծանր լծի ներքո: 1826-29 թթ. Ռուսաստանի՝ իր մահմեդական հարեւանների հանդեպ տարած հաղթանակների շնորհիվ հայերը սկսեցին շնչել ավելի ազատ... Իրենց հերթին նրանք նպաստեցին ռուսական զորքերի հաղթանակին պարսիկների եւ թուրքերի դեմ: Տաճկահայերը եւ պարսկահայերը հրճվանքով էին ընդունում ռուսական զորքերին, մատակարարում էին նրանց պարեն ու պաշար, խնամում էին հիվանդներին ու վիրավորներին, մեծարանքով հողին էին հանձնում ռուս զոհված ռազմիկներին...»:

Ինչպես վկայում եւ պնդում են ռուս եւ եվրոպացի հայագետները, հայերը Ռուսաստանին տվել են բազմաթիվ կամավորներ, սպաներ, խիզախ եւ քաջ գեներալներ, հմուտ եւ մեծարվեստ զորահրամանատարներ: Նրանցից մեկը՝ **Վալերիան Գրիգորի որդի Մադաթովն** է (Մադաթյանց), որ ճանաչված է իբրեւ ռուս-թուրքական եւ ռուս-պարսկական 1826-29 թթ. պատերազմների գլխավոր հերոսներից մեկը: 1812 թվականի Հայրենական պատերազմում նա աչքի էր ընկել «իր նշանավոր ռազմական սխրագործություններով, որոնցով իր վրա էր հրավիրել Ալեքսանդր կայսեր եւ պրուսական թագավոր Վիլհելմ 3-րդի ուշադրությունը, որոնցից նա ստացել է ամենաբարձր պարգեւները»: Փարիզից ռուսական զորքերի հաղթական վերադարձից հետո Ալեքսանդր Առաջինը նրան նշանակում է Ղարաբաղի մարզում տեղակայված ռուսական զորքերի գլխավոր հրամանատար:

1826 թվականին գահաժառանգ Աբբաս-Միրզան պարսկական մեծաթիվ զորքի գլուխն անցած ներխուժում է ռուսական տարածքները: Տասը հազար հոգուց բաղկացած նրա առաջապահ զորքը, որ բաղկացած էր շահի անձնական զորագնդից եւ ընտիր հեծելազորից, արընթաց գնում էր դեպի Թիֆլիս: Գեներալ Մադաթովը, ընդամենը երկու գումարտակով, եգերների երկու վաշտով, չորս թեթեւ հրանոթով եւ ղարաբաղցիների հեծյալ մի խմբով, այսինքն՝ մոտ տասն անգամ պակաս ուժերով, դիմագրավեց պարսկական զորքին Շամխոր գետի եզերքներին եւ 1826 թվականի սեպտեմբերի 3-ին գլխովին ջախջախեց: Մագդա Նեյմանը գրում է. «Այդ փառավոր հաղթանակը պսակվեց Թուրքմենչայի դաշնագրով, ըստ որի Պարսկահայաստանի մի մասը, որ ընկած է Արաքսի եւ Քուռի միջեւ, միացավ Ռուսաստանին»:



Գեներալ Բեհբութով



Լորիս-Մելիքով



Վալերիան Մադաթով

Փառավոր ու սխրագործ, ծնունդով հայ ռուսական գեներալը հանգչում է Սանկտ Պետերբուրգում, Ալեքսանդրո-Նեւսկի կոչվող մայրավանքում:

Իսկ ռուս-թուրքական Ղրիմի պատերազմում, 1853-55 թթ., աչքի ընկավ ծնունդով հայ մի այլ ռուսական գեներալ՝ իշխան **Վասիլի Հովսեփի որդի Բեհբութովը** (Բեհբությանց): Ինչպես գրում է Մագդա Նեյմանը, «իշխանը աչքի ընկավ այնքան, որ Նիկոլայ Առաջին կայսրը նրան գրեց՝ «Դու զարմացրիր Ռուսաստանը, ես էլ կզարմացնեմ քեզ»: Եվ այս խոսքերով էլ թագավորը նրան պարգեւատրում է Անդրեյ Պերվոզվաննու բարձրագույն շքանշանով:

Կովկասում մղվող երկարամյա պատերազմներն առանձնապես հռչակավոր դարձրին իշխան **Մովսես Զաքարի որդի Արղությանց-Երկայնաբազուկի** անունը: Ռուսաստանի առջեւ նրա ռազմական ծառայությունների վկայությունը եղավ այն հրաշալի հուշարձանը, որ ցարական կառավարությունը կանգնեցրեց նրա պատվին Թեմիր-խան-Շուրայում, որտեղ գտնվում էր Դաղստանի ռուսական զորքերի հրամանատարի նրա գլխավոր շտաբը:

Գեներալ-ադյուտանտ **Միքայել Տարիելի որդի Լորիս-Մելիքովը** (Լոռու-Մելիքյանց) առանձին գործող կորպուսի հրամանատար էր, գեներալ-լեյտենանտ **Արշակ Հարությունի որդի Տեր-Ղուկասովը** (Տեր-Ղուկասյանց)՝ Էրիվանյան զորաջոկատի: Գեներալ-լեյտենանտ **Իվան (Հովհաննես) Դավթի որդի Լազարեւը** (Լազարյանց), եւս մեկ ծնունդով հայ ռուսական գեներալ, որը գլխավորում էր այն զորաջոկատը, որ գիշերային գրոհով առավ անմատչելի համարվող Կարսի բերդը:

1897 թվականին «Ռուսսկի ինվալիդ» ամսագիրը այս առիթով գրում է. «Բոլորը ցնցված էին այս լուրից... Լազարեւը դիմել է զինվորներին. «Ես ձեզ հետ եմ: Նահանջ չի լինելու»: Զինվորները լավ գիտեին իրենց հրամանատարին, նրա հետ առաջ էին գնում հաստատ քայլով եւ, իհարկե, նահանջը չէին կարող անգամ մտքով անցկացնել... Կարսը հանձնվեց: Դա ազդեց թշնամու ոգու վրա ոչ միայն Ասիայում, այլեւ Եվրոպայում»: Կարսը գրոհող զորաջոկատներից մեկի հրամանատարը գեներալ **Ալխազովն** էր (Ալխազյանց), որն ավելի վաղ թուրքերին քշել էր Սուխում-Կալեից:

Ավա՜ղ, ե՛ւ նրանք, ե՛ւ ծնունդով հայ ռուսական գեներալներ **Տեր-Ասատուրովը** (Տեր-Ասատուրյանց), **Դենիբեկովը, Քիշմիշեւը, Քեթխուդովը** եւ այլ զորահրամանատարներ, որոնց ժամանակին ռուսական կայսրերն առատորեն պարգեւատրել են բարձրագույն շքանշաններով ու մեդալներով, ում ժամանակին արժանիորեն փառաբանել է ռուսական եւ եվրոպական մամուլը, այսօր անարդարացիորեն մոռացության են տրված: Մոռացության են տրված ե՛ւ Ռուսաստանում, որին ինքնամոռաց ծառայել են, ե՛ւ Հայաստանում, որին իրենց սխրագործություններով պանծացրել են, քանզի եղել են ծագումով եւ էությամբ հայ: Հենց նրանք են հաղթանակով գլխավորել Կովկասը նվաճող ռուսական զորքերը:

Մոռացության է տրված եւ այլ մի բան. ռուսական զորքերի հանդեպ ունեցած գրկաբաց ու սիրալիր վերաբերմունքի, համագործակցության եւ օգնության համար տաճկահայերը եւ պարսկահայերը միշտ ստիպված են եղել շատ թանկ վճարել: Ռուսական զորքերի հեռանալուց հետո հայերն այլեւս չէին կարող մնալ այնտեղ:

«Հայրենի հողին եւ իրենց նախնիների սրբություններին կատարյալ կապվածությամբ հանդերձ,- գրում է պետերբուրգցի հայագետը,- հայերը ստիպված էին քանդել իրենց տունը, թողնել իրենց տունն ու եկեղեցիները եւ հոծ զանգվածներով հետեւել ռուսական զորքերին՝ դեպի անհայս եզերքներ»: Հայերի հանդեպ այրող ատելությունը ելք գտավ 1894-96 թվականներին, երբ Թուրքիայում, ըստ տարբեր տվյալների, ոչնչացավ, սրի քաշվեց երեք հարյուր հազարից վեց հարյուր հազար հայ»: Եվ դա էլ դարձավ սկիզբը հայկական գենոցիդի՝ հայ ժողովրդի զանգվածային ոչնչացման:

Խորհրդանշական է, որ մինչեւ այսօր էլ այդ թվականների եւ դրանց հաջորդած տարիների եւ 1915 թվականի շատ ավելի ողբերգական իրադարձություններին թուրքական ղեկավարության տված պաշտոնական գնահատականը հանգում է հետեւյալ պնդումին. «Ոչ մի գենոցիդ չի եղել: Հայերը օգնում էին հակառակորդին եւ խանգարում էին հաղթել ռուսներին, ինչի համար էլ արժանի պատիժ են կրել»:

Ինչպես նշել են ռուս հայագետներ Ամֆիտեատրովը, Նեյմանը, նրանց ֆրանսիացի գործընկեր Ռիշարդոն, այն հայերը, որոնք հնարավորություն ստացան «զարգանալ ռուսական տիրապետության ներքո, իրենց տնտեսական ու մշակութային հաջողություններով շատ առաջ անցան Անդրկովկասի այլ ժողովուրդներից»: Եվ դարձան «ռուսական մշակույթի լավ առաջատարներ, եւ ռուսաց լեզուն նրանց մեջ տարածվում է ավելի արագ եւ դյուրին, քան Անդրկովկասի այլ ժողովուրդների մեջ»:

Բայց հիմա ո՞վ է, բացի թուրքերից, հիշում, թե հայերը միակ ոչ սլավոնական ժողովուրդն են, որ մասնակցել են ռուս-թուրքական բոլոր 11 պատերազմներին, որոնք տեւել են 44 տարի... Եվ միշտ Ռուսաստանի կողմում: Իսկ ո՞վ է այսօր հիշում ոչ միայն Ռուսաստանում, այլեւ հենց Հայաստանում, որ ռուս մեծագույն զորավար **Սուվորովին** ծնել է հայ մայր, ուղղափառ քահանայի դուստր **Աշխեն Տեր-Մանուկյանը**, որ հանգչում է Մոսկվայում, Վագանկովոյի հայկական գերեզմանոցում:

Դեռ շատ բան կարելի է վերհիշել ռուս-հայկական հարաբերությունների պատմությունից, որ մոտենում է իր հազարամյակին: Բավարարվենք եւս մեկ փաստով: Հայրենական մեծ պատերազմի սկզբին Հայաստանի բնակչությունը կազմում էր մոտ 1 միլիոն 320 հազար մարդ: Նրանցից 600.000-ը, հասուն բնակչության կեսից ավելին, մեկնեց ռազմաճակատ՝ պաշտպանելու մեր ընդհանուր հայրենիքը: Ողջ վերադարձան միայն 300.000-ը: 115 հոգի դարձան Սովետական Միության հերոս, 64-ը՝ գեներալ (հետագայում նրանց թիվը հասավ 200-ի): Չորս հոգի արժանացան մարշալի կոչման, մեկը՝ ծովակալի: Իսկ օդաչու **Արմենակ Խամփերյանցը**, իրեն կոչելով իր կյանքը սեփական կյանքի գնով փրկած ռուս տղայի անունով՝ Սերգեյ Խուդյակով, նրա անունով հասավ ավիացիայի մարշալի աստիճանի:

Ավա՜ղ, ԽՍՀՄ-ի աղետալի փլուզումը մեր հիշողությունից գրեթե ջնջել է այս հերոսական պատմությունը...

### Հիմա ի՞նչ է

Եվ այսօր էլ Հայաստանի բնակչության մի զգալի մասը՝ 30 տարեկանից վեր, ոչ միայն գիտի, հասկանում է ռուսաց լեզուն, այլեւ գործնում ձեւով հաղորդակցվում է ռուսերեն լեզվով, դիտում ռուսական ֆիլմեր, կարդում մոսկովյան թերթեր եւ ամսագրեր, նախընտրում ռուսական հեռուստաալիքները, լսում ռուսական ռադիոն:

Ռուսական թատրոնը, ռուսական երաժշտությունը, ռուս գրականությունը Հայաստանում ապրում են լիարյուն կյանքով: Երեւանում ռուսերենը կարող եք լսել ամեն առիթով: Հայաստանի քաղաքների տասնյակ փողոցներ այսօր էլ կոչվում են ռուսական անուններով: Ռուսաց լեզուն իբրեւ պարտադիր առարկա դասավանդվում է Հայաստանի բոլոր դպրոցներում, շուտով երկու դար կլինի:

Զգացողությունը այնպիսին է, որ թվում է, թե մենք նախկինի պես գտնվում ենք ընդհանուր տարածության մեջ՝ ե՛ւ լեզվական, ե՛ւ պետական: Մինչդեռ Հայաստանը Ռուսաստանի Դաշնությունից հարյուրավոր կիլոմետրերով անջատում է վրացական տարածքը: Այդ պատճառով էլ հայ-ռուսական կապերը ենթակա են մշտական ճնշումի ու ներգործության: Չէ՞ որ Հայաստանի ամբողջ ապրանքաշրջանառությունը, մարդկանց եւ միջոցների տեղափոխությունը կատարվում է Վրաստանի տարածքով: Եվ դա ոչ միայն դժվարացնում է Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ եղած կապերի իրագործումը, այլեւ հանգեցնում է ներկրման եւ արտահանման առավել թանկացմանը: Դա էլ, իր հերթին, մասնավորապես հայկական արտադրության բարձրորակ շատ տեսակներ դարձնում է ռուսական շուկայում ոչ մրցունակ: Եվ այդ ամենը Վրաստանով Ռուսաստան ճանապարհին փոխադրական մեծ ծախսերի, մաքսավճարների եւ այլ հարկադիր վճարումների պատճառով:

Այնուամենայնիվ հայերի մի զգալի թիվը նախկինի պես ռուսներին ընկալում է իբրեւ մերձավոր ու հարազատ ժողովրդի, պրումներ ունենում հայերի եւ ռուսների միջեւ եղած եղբայրական կապերի թուլացման համար, որ նկատելի է այս վերջին 20 տարում, ուրախանում այդ կապերի վերականգնման ամեն մի փաստի համար:

**ՎՍԵՎՈԼՈԴ ՄԱՐՅԱՆ**
**«Լիտերատուրնայա գազետա»-ի սեփական թղթակից Կովկասի երկրների գծով**
**«Լիտերատուրնայա գազետա», 18-24 նոյեմբերի 2009, N 46**
**Թարգմ. Ե. Տ.-Խ.**

# Երկու հայ՝ Մոսկվայում

*Ըստ վերջերս Մոսկվայում հրապարակված վիճակագրական տվյալների՝ Ռուսաստանի մայրաքաղաքում ամեն երկրորդ հանցագործությունը կատարում է միգրանտ: Պատահական չէ, որ մոսկովյան իշխանությունները՝ քաղաքապետ Լուժկովի գլխավորությամբ, պահանջում են դաշնային իշխանություններից՝ առավելագույն խստությամբ վերահսկել միգրանտների հոսքը Ռուսաստան, մասնավորապես Մոսկվա: Այդ քաղաքում արդեն իսկ արգելված է միգրանտներին երթուղային տաքսի վարել (այդ մասին «**Ազգ**»-ը գրել էր նախորդ համարներում), բավական դժվարացել է, եթե չասենք՝ անհնարին է դարձել միգրանտի համար աշխատանք գտնել: Իսկ վարչապետ Պուտինը վերջերս, ընդառաջ գնալով քաղաքային իշխանություններին, լուրջ սահմանափակումներ մտցրեց Ռուսաստան մտնող միգրանտների թվերում: Ստացվում է, որ Ռուսաստանի մայրաքաղաքում միգրանտներին այնքան էլ մեծ սիրով չեն սպասում, իսկ Հայաստանի քաղաքացին Մոսկվայում նույն միգրանտն է եւ ոչնչով չի տարբերվում, օրինակ, չեչենից:*
*Մենք կփորձենք երկու օրինակով ցույց տալ Մոսկվայում հայ սովորական միգրանտի կյանքը:*

## Օրինապաշտ միգրանտ

Դպրոց, ինստիտուտ ավարտելուց, ինչպես նաեւ բանակում ծառայելուց հետո, երեւանցի Դավիթը, իր շատ ու շատ հասակակիցների նման, որեւէ գործ չգտնելով Հայաստանում, որոշեց մեկնել Մոսկվա՝ քեռու՝ ՌԴ քաղաքացի Ռազմիկի մոտ: Արդեն ինքնաթիռում նրան տվեցին միգրացիոն քարտիկը, որը լրացնելու համար Դավիթը պետք է գրեր իր անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրի տվյալները, Ռուսաստան գալու պատճառը, թե որքան ժամանակով է եկել Ռուսաստան, եւ այլն: Լրացնելով այս ամենը, մոսկովյան օդանավակայանում արդեն, սահմանային անցակետում նա միգրացիոն քարտիկում իր գրած բոլոր տեղեկությունները պարտավոր է ասել նաեւ անցակետի աշխատողին, չնայած նույն այդ քարտիկը, անձնագրի հետ, ներկայացրել է վերջինիս: Պատասխանելով անցակետի աշխատողի որոշ հարցերին՝ Դավիթը մուտք է գործում Ռուսաստան, որի տարածքում նա իր գալու ավիատոմսով եւ լրացրած միգրացիոն քարտիկով կարող է առանց գրանցման «ազատ ման գալ» երեք օր: Սակայն այդ երեք օրվա մեջ նա պարտավոր է գրանցվել մոսկովյան որեւէ հասցեում: Դավիթը խնդիր չուներ. քեռին նրան գրանցեց իր տանը՝ երեք ամսով, այս գործողությունը գումար չի պահանջում տանտիրոջից: Սակայն միայն գրանցում ունենալով Մոսկվայում չես կարող աշխատել (օրինական), Դավթին պետք էր նաեւ աշխատանքի իրավունք: Ընդ որում, եթե այդ փաստաթուղթը, օրինակ, մերձմոսկովյան է, ապա դու չես կարող աշխատել բուն Մոսկվայում, եւ հակառակը: Դավիթը դա էլ ձեռք բերեց, որի համար վճարեց 8000 ՌԴ ռուբլի (գրեթե 300 դոլար): Աշխատանքի իրավունք տվող փաստաթուղթը, ի դեպ, լինում է տարբեր աշխատանքների համար՝ շինարարություն, սպասարկման ոլորտ եւ այլ: Սպասարկման ոլորտում աշխատելու իրավունք կովկասցիները մեծ դժվարությամբ են ձեռք բերում, նրանց «մենաշնորհը» հիմնականում շինարարությունն է: Դավթին պետք էր նաեւ սանիտարական գրքույկ, որն ունենալու համար նա պարտավոր է իր գործատուի հետ գնալ սանէպիդկայան, անցնել բուժզննում, որի արդյունքների հիման վրա էլ նրան կամ կտան այդ գրքույկը, կամ՝ ոչ. Դավթին տվեցին՝ 3000 ռուբլիով (100 դոլար): Հիմա արդեն, ունենալով երեք ամսվա գրանցում, մեկ տարվա աշխատանքային իրավունք եւ սանիտարական գրքույկ, Դավիթը հանգիստ կարող էր աշխատել: Նրա աշխատավարձը կազմում էր շուրջ 1000 դոլար (շինարարության մեջ, օրական, որպես բանվոր աշխատելով, ստանում էր 1000 ռուբլի): Սակայն ճանապարհին նրան գրեթե ամեն օր կանգնեցնում էր ոստիկանական մեքենան՝ փաստաթղթերը ստուգելու, եւ, չնայած Դավիթը օրինական միգրանտ էր, շատ հաճախ նրան տանում էին բաժին, ընդ որում՝ ոչ մոտակա, այլ, օրինակ, քաղաքի մյուս ծայրի, փաստաթղթերը համակարգչի միջոցով ստուգելու համար: Այդ գործողությունը տեւում է 3-4 ժամ: Այդքան ժամանակ Դավիթը նստում էր բաժնում, երբեմն նույնիսկ խցում եւ սպասում, թե երբ պետք է ստուգեն-վերջացնեն իր օրինական փաստաթղթերը: Փաստաթղթերը ստուգելուց հետո ոստիկանները դրանք տալիս էին Դավթին, ու նա արդեն մենակ, Մոսկվայի հայտնի չէ, թե որ մասից, պետք է վերադառնար իր աշխատավայր: Երբ տեղ էր հասնում, արդեն աշխատանքային օրը ավարտված էր. Դավիթն այդ օրն իր օրավարձ 1000 ռուբլին չստացավ: Ում մեղքով...

Երբ անցավ Դավիթի մոսկովյան կյանքի առաջին երեք ամիսը, նա, գործող օրենքի համաձայն, պետք է հատեր ՌԴ սահմանը (թեկուզ 5 րոպեով) եւ ցանկության դեպքում նորից վերադառնար: Ամենամոտ սահմանը Ուկրաինայինն է: Վճարելով 70 դոլար գնացքի տոմսի համար՝ Դավիթը մեկնեց Ուկրաինա եւ անցնելով սահմանը՝ հենց նույն գիշեր վերադարձավ: Ընդհանուր առմամբ այդ ամբողջ ուղեւորությունը նստեց շուրջ 200 դոլար (հաշվի առնելով նաեւ գնացքում սնվելը):

Վերադառնալով Մոսկվա՝ Դավիթի համար նորից պետք է սկսվի այս նույն պատմությունը: Իսկ եթե նա հանկարծ ուզենա դառնալ ՌԴ քաղաքացի, ապա օրենքով, բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը հանձնելուց հետո պետք է սպասի 5 տարի:

Փաստորեն Դավիթը Մոսկվայում երեք ամսում աշխատելով 3000 դոլար, նույն երեք ամսում ծախսել է. սանիտարական գրքույկի համար՝ 100 դոլար, աշխատանքի իրավունքի համար՝ 300 դոլար, եթե ընդունենք, որ նրան այդ ժամանակահատվածում առնվազն շաբաթը երեք անգամ (եւ հենց այդպես էլ լինում է), կանգնեցրել է ոստիկանությունը, իսկ ամեն մի «կանգնեցնելը» նստել է 1000 ռուբլի, ապա Դավիթը զրկվել է ավելի քան 36000 ռուբլուց (մոտ 500 դոլար): 3 ամսում վաստակելով 3000 դոլար՝ Դավթին մնացել է մոտ 2000-ը, իսկ գումարենք նաեւ սենյակի վարձը (500 դոլար), սնունդը, հեռախոսը եւ այլն, եւ այլն:

## Ապօրինի միգրանտ

Երեւանցի Հայկը բանակից հետո, քանի որ չուներ մասնագիտություն (իսկ եթե ունենար՝ ի՞նչ), որոշեց մեկնել Մոսկվա՝ փող աշխատելու: Օդանավում լրացնելով միգրացիոն քարտիկը, անցնելով անցակետը՝ մուտք գործեց Ռուսաստան: Սակայն, ի տարբերություն Դավթի, Հայկը Մոսկվայում ՌԴ քաղաքացի ծանոթ-բարեկամ չուներ: Ընդամենը ընկերներ էին այնտեղ: Հասնելով նրանց մոտ՝ շինհրապարակ, Հայկը ծանոթացավ իր նոր կենցաղային պայմաններին՝ փայտե վագոն, փայտե մահճակալներ, «պլիտայով» ջեռուցում, մետաղյա «բազմաչարչար» ափսեներով կերակուր: Հայկն, իհարկե, համաձայնեց նշված պայմաններին: Ընկերները նրան օգնեցին առաջին գրանցումն անելիս (գումար չի պահանջվում): «Շեֆ»-ը մոսկվացի էր, նրա տանն էլ 3 ամսով գրանցեցին Հայկին, սակայն նույն ընկերների խորհրդով, Հայկը աշխատանքի իրավունք «չհանեց». ոչ ոք էլ չուներ: Հայկի ամսական աշխատավարձը նույնպես հասնում էր 1000 դոլարի, իսկ երբ ոստիկանությունը կամ միգրացիոն վարչությունը գալիս էր պլանային (շատ հաճախ նաեւ ոչ պլանային) ստուգումների, շինհրապարակում ոչ ոք չէր մնում. բոլորն ապօրինի միգրանտներ էին՝ արտաքսման ենթակա: Հայկի գալուց երեք ամիս անց, սակայն, միգրացիոնը հանկարծակի եկավ ստուգումների. ֆիրման տուգանվեց 150 հազար ռուբլիով, իսկ բանվորները տարվեցին բաժին: Նրանցից յուրաքանչյուրից գանձելով շուրջ 500-ական դոլար՝ ազատ արձակեցին: Հայկը, իր աշխատած գումարի զգալի մասը «նիզաշտո» տալով, հասկացավ, որ այսպես չի կարող շարունակվել: Դիմեց «գրանցում անող» ընկերոջը՝ իրեն Մոսկվայում գրանցելու համար: Սակայն ընկերը, պահանջելով դրա համար 6000 ռուբլի, ընդամենը ապօրինի գրանցումով ապահովեց Հայկին: Վերջինս իբր անցել էր սահմանը, սակայն նրա անձնագրում կեղծ կնիքներ էին: Ոստիկանը, որի միջոցով արել էին գրանցումը երաշխավորեց, որ տվյալ շրջանում Հայկին ոչ ոք «չի նեղացնի»: Այդպես էլ եղավ. շրջանում, որտեղ բնակվում էր Հայկը, ոստիկանները, ստուգելով նրա անձնագիրը... միայն ժպտում էին՝ նրանց «ձեռքի գործն էր», սակայն երբ Հայկը գնում էր Մոսկվայի այլ շրջաններ, ամեն կանգնեցնելուն 1000 ռուբլի էր տալիս ոստիկաններին, վերջիններս էլ կրկին ժպտում էին: Հայկը չէր կարողանում կանոնավոր աշխատանք ձեռք բերել (նախկին ֆիրման փակել էին), որոշ ժամանակ անց նա ընդհանրապես մնաց առանց գումարի:

Հաշվել, թե որքա՞ն է կազմել Հայկի «մոսկովյան եկամուտը», իմաստ չունի. նրա խոսքերով՝ Մոսկվայում ապրած 7 ամիսներին կարողացել է միայն 100 դոլար ուղարկել տուն: Մնացածը՝ ոստիկաններ, փաստաթղթեր, հետագայում նաեւ տան վարձ, սնունդ եւ այլն, եւ այլն: Այժմ Հայկը Մոսկվայում «ման է գալիս» անձնագրի կորուստը ապացուցող փաստաթղթով: 1200 ռուբլիով այն կարող ես ստանալ, եթե դեսպանատանը ծանոթ ունես, իսկ ժամկետը (տարբեր ժամկետներով է լինում) անցնելուց հետո կարող ես «նորից կորցնել անձնագիրդ»: Սակայն այս փաստաթղթով չես կարող ձեռք բերել աշխատանքի իրավունք: Կարող ես միայն ստանալ հայրենիք վերադարձի փաստաթուղթը. Հայկն հենց այդպես էլ որոշել է անել:

## Եզրակացություն

Ի՞նչ է ստացվում: Լինես օրինակա՞ն, թե՞ ապօրինի միգրանտ, միեւնույնն է, չես կարող այսօրվա Մոսկվայում «փող աշխատել: Եթե ցանկանում ես դառնալ ՌԴ քաղաքացի, ապա օրենքով պետք է սպասես 5 տարի, իսկ ապօրինի կերպով 150 հազար ռուբլիով «անողներ» կան՝ իսկայական «բիզնեսի» ներկայացուցիչներ:

Կարեւորն այս ամենի մեջ մեկն է. բացի նրանից, որ կոնկրետ Մոսկվա մեկնած հայաստանցին թախիծ է պատճառում իր բարեկամներին եւ ընդհանրապես հայրենասեր հասարակությանը, Մոսկվա մեկնելը, հաշվի առնելով նաեւ տոմսերի գինը, նույնիսկ ֆինանսապես ձեռնտու չէ միգրանտին, լինի նա օրինական թե ապօրինի:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

Հ.Գ.-Ապօրինի գրանցում անելով (իսկ հաճախ անող ոստիկանները չեն էլ տեղեկացնում «հաճախորդին», որ գրանցումն ապօրինի է), միգրանտը լուրջ խնդիրների առաջ է կանգնում հետդարձի ժամանակ՝ օդանավակայանում: Օդանավակայանի հենց մուտքում կանգնած ոստիկանները ստուգում են (համակարգչով) վերջինիս գրանցումը: Բացահայտելով, որ կեղծ է՝ միգրանտի վրա սահմանում են պետական տուգանք 2200 ռուբլի (բայց կարող ես «խոսել»՝ 1000-ով բաց թողնեն), սակայն արդեն վերջին անցագրային կետում քո անձնագրում նույն այդ պատճառով կամ արտաքսման կնիք կխփեն, կամ... իհարկե, գումար կգանձեն, այս անգամ պետականի հետ ոչ մի կապ չունեցող:

ՊՈՐՏ Օ ՊՐԵՆՍ

# Երկրաշարժից երկու շաբաթ անց մարդիկ են փրկվել

Հաիթիում որոնողական-փրկարարական աշխատանքներ կատարող ամերիկացի զինծառայողները մայրաքաղաք Պորտ օ Պրենսում հունվարի 12-ի երկրաշարժից երկու շաբաթ անց շենքերից մեկի փլատակներում գտել են 35-ամյա մի տղամարդու: Նա ծածկված էր ցեխով ու փոշով, փաստորեն մերկ էր, բայց՝ առանց տեսանելի վերքերի: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը հաղորդում է, որ փրկվածին անմիջապես հասցրել են հիվանդանոց: Փրկարարները նրա ողջ մնալը համարում են «իսկական հրաշք»: Չնայած ոտքի կոտրվածքին, բժիշկները հայտարարել են, որ նրա վիճակը լավ է:

Մեկ ուրիշ փրկվածի՝ 14-ամյա աղջնակի մասին հաղորդում է «Վեստի» հեռուստաալիքը: Տարերքի պահին երջանիկ պատահականությամբ նրան փրկել էր սեփական մահճակալը, որը շրջվել էր՝ աղջնակին պաշտպանելով ընկնող բեկորներից: Բացի դրանից, մոտերքում խմելու ջուր էր եղել:

# Նշվեց Հոլոքոստի զոհերի հիշատակը

Հունվարի 27-ին ՄԱԿ-ը նշել է Հոլոքոստի զոհերի հիշատակի միջազգային օրը: Գլխավոր քարտուղար Բան Գի Մունը իր ուղերձում ժողովուրդներին կոչ է արել հիշել Հոլոքոստը եւ պաշտպանել ամենքի մարդկային արժանապատվությունը: Նա հիշեցրել է, որ 65 տարի առաջ ազատագրվեց ամենամեծ եւ տխրահռչակ մահաճամբար Օսվենցիմը: Այնտեղ եւ մյուս ճամբարներում խոշտանգվել եւ սպանվել են միլիոնավոր մարդիկ (մեծ մասը՝ հրեաներ):

# Դավոսում բացվեց համաշխարհային տնտեսական ֆորումը

Դավոսում (Շվեյցարիա) երեկ 40-րդ անգամ բացվել է համաշխարհային տնտեսական ֆորումը, որն այս տարի անցկացվում է «Վերարմատավորել, վերափոխել, վերակառուցել» նշանաբանով: Քննարկվող գլխավոր թեմաներն են համաշխարհային տնտեսության հանդեպ վստահության վերականգնումը, ճգնաժամի հետեւանքների հաղթահարման ուղիները, հետճգնաժամային նոր մարտահրավերները:

BBC-ն նշում է, որ ներկա համաժողովի հետ մարդիկ մեծ հույսեր են փայփայում: Իզուր չէ, որ Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին հանդես է եկել կապիտալիզմի ապագային նվիրված բացման խոսքով: Նա ասել է, որ ճգնաժամերի ընթացքում քանիցս վարկաբեկված կապիտալիզմը մշտապես, փյունիկի նման, կարողացել է գտնել վերածնվելու հնարավորություններ:

Ներկայումս բավական տարածված է այն կարծիքը, որ հարկավոր է վերակառուցել կապիտալիզմը, այսինքն կարգի բերել դրա արյունատար համակարգի՝ ֆինանսների աշխատանքը, ինչպես նաեւ փնտրել կապիտալների տեղաշարժի վերահսկման ուղիներ:

# Հրետակոծություն Կորեական ծովում



Հունվարի 27-ի առավոտյան Հյուսիսային եւ Հարավային Կորեաների ծովային սահմանի երկու կողմերից արկեր են արձակվել սահմանի ուղղությամբ, որն անցնում է 38-րդ զուգահեռականի շրջանում: ՄԱԿ-ը 1953 թվականին տվյալ շրջանը հայտարարել է ապառազմականացված գոտի:

The Korea Times թերթը հաղորդում է, որ հյուսիսկորեական ռազմանավերի հրետանին դեպի սահման արձակել է 30 արկ: Հարավկորեական ծովուժը ի պատասխան նախազգուշական կրակով մոտ 100 արկ է արձակել «Վուլկան» բազմափող ինքնաշխատ թնդանոթներից:

Միջադեպի մասնակիցները որեւէ վնաս կամ կորուստ չեն կրել: Բոլոր արկերն ընկել են ջուրը, ըստ որում դրանցից ոչ մեկը չի հատել սահմանը: Հարավկորեական կողմը հայտարարել է, որ ինքը պատրաստ է եղել հակագրոհ ձեռնարկել, եթե հյուսիսկորեական արկերը հայտնվեին Հարավային Կորեայի տարածքային ջրերում: ԿԺԴՀ-ին ուղարկվել է երեք նախազգուշական հաղորդագրություն, որ հարավկորեական ծովուժը պատրաստ է պատասխան գործողությունների, քանի դեռ հյուսիսկորեացիները դիմում են նման քայլերի:

# Սպիտակ տունը թույլատրեց Patriot-ներ վաճառել Տայվանին

Նախագահ Բարաք Օբամայի վարչակազմը թույլատրել է, որ Տայվանին վաճառվեն Patriot զենիթահրթիռային համալիրներ, UH-60 Black Hawk ուղղաթիռներ եւ կապի սարքավորումներ: Սակայն մերժվել է F-16 կործանիչներ եւ Apache ուղղաթիռներ ձեռք բերելու Տայվանի խնդրանքը: «Վաշինգտոն թայմս» թերթը այդ մերժումը բացատրում է նրանով, որ Վաշինգտոնը չի ուզում չափից ավելի սրել հարաբերությունները Պեկինի հետ:

ԱՄՆ-ը Տայվանի հետ զինավաճառքի գործարք կնքել էր 2008-ին: Այն ժամանակ Չինաստանի իշխանությունները կտրուկ հակազդել էին գործարքին եւ գրեթե լիովին դադարեցրել ռազմական համագործակցությունն ԱՄՆ-ի հետ:

2009-ի աշնանը Տայվանը ամերիկացիներին պատվիրել էր Black Hawk, Apache ուղղաթիռներ եւ Patriot հրթիռային համակարգեր: Հնարավոր գործարքի գումարը մոտ 6,5 մլրդ դոլար էր: Ավելի վաղ պատվիրված F-16 կործանիչները պետք է փոխարինեին Տայվանի հնացած ռազմօդանավերին: 2010-ի տարեսկզբին Պենտագոնը թույլատրել էր Patriot-ների եւ հարակից սարքավորումների վաճառքը: Տվյալ գործարքի գումարը մոտ 1 մլրդ դոլար է:

AZG NEW PDF.qxd 1/27/2010 10:44 PM Page 1



# Ուխտագնացություն՝ Պարույր Սեւակի շիրիմին



***Ինչպես ամեն հունվարի 24-ին, այս տարի եւս ուխտագնացություն տեղի ունեցավ մեծ բանաստեղծի շիրիմին՝ նրա ծննդյան օրվա առիթով: Պարույր Սեւակի տուն-թանգարանի տնօրեն Ավետիք Գրիգորյանը ամեն ինչ կազմակերպել էր հավուր պատշաճի: Սեւակապաշտ ուխտավորները, հատկապես Երեւանից ու Աբովյան քաղաքից ժամանել էին ոչ միայն սեր ու հարգանք մատուցելու, այլեւ հաղորդվելու «եռագույն պատարագով»: Ավետիք Գրիգորյանը, Հայաստանի գրողների միության նախագահ Լեւոն Անանյանը, վաստակավոր մանկավարժ Նինա Հարությունյանը, բանաստեղծուհի Դարիկո Խաչատրյանը, Արարատի մարզպետ Վարդգես Հովակիմյանը եւ Սեւակի վաստակին քաջատեղյակ ու նրա տուն-թանգարանի հովանավոր Ալլա Հակոբյանը խոսեցին «անլռելի Պարույրի» մասին, նրա պատգամը փոխանցեցին ներկաներին, որոնց մեջ մեծ թիվ էին կազմում «Սեւակախումբ» վիրտուալ կայքի ներկայացուցիչները, մինչ Աբովյան քաղաքի մանկական երգչախումբը Գրիգոր Ղամբարյանի ղեկավարությամբ մատուցում էր Պ. Սեւակի բառերով ստեղծված հզոր երգերը: Մեկ խոսքով՝ Սեւակյան սերն ու իմաստությունն էր այդ օրը թեւածում Զանգակատուն գյուղի վրա:***

***Հնչած ելույթներից ստորեւ առանձնացնում ենք լայն հատվածներ Ալլա Հակոբյանի խոսքից:***

Ինձ համար մեր Մեծերի շիրիմները յուրովի սրբավայրեր են: Երբ այս մասին խոստովանեցի մեր վարդապետներից մեկին, նա անմիջապես ինձ սաստեց, ասելով. «Տիկին Ալլա, զգույշ եղեք խոսքի եւ արտահայտությունների մեջ: Մեր եկեղեցին իր սահմանված եւ կանոնական սրբերն ունի»: Բայց ի՞նչ են մեր Մեծերի շիրիմները, եթե ո՛չ սրբավայրեր, եթե մենք այդ վայրերում սրբվում եւ մաքրվում ենք նրանց լույսով: Եթե դեռ 1971-ին **Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը** Պ. Սեւակին Եռամեծ կոչեց եւ իր դամբանական խոսքում նշեց. «Պ. Սեւակի ծնունդը եղավ ճշմարտապես եւ ամբողջապես մեր կյանքի՛ համար, մեր մշակույթի՛, մեր ներկայի՛ եւ ապագայի՛ համար մի պայծառ «Եղիցի լույս»: Եվ այդ լույսի շնորհիվ իր պոեզիայի միջոցով, նա շարունակում է իր Աստվածահաճո գործը»:

«Մեր ազգը ի սկզբանե ունեցել է Մե՛ծ անձնավորություններ, որոնք իրենց կյանքով եւ իրենց գործով անմահացել են: Եվ նրանց ժառանգությունը մեզ համար այսօր ե՛ւ փառք, ե՛ւ պատիվ է, եւ ստեղծարար նո՛ր սխրանքների աղբյուր եւ ճանապարհ», ասել է մեր ժողովրդի կողմից շատ սիրված Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը: Ուստի, պարզապես իրավունք չունենք չքայլել մեր նախնիների նշմարված ճանապարհով, իրավունք չունենք մեր մաքուր եւ զուլալ աղբյուրների ջրերը թողած, ուրիշների առվի ջուրը խմել: Այսօր հմուտ ձեռքով քողարկված հեռուստաֆիլմերի կամ հաղորդումների շղարշի տակ մեր հասարակությանը հրամցվում են այլաբարո, օտարածին, այսպես կոչված «սերիալներ», որոնք մերոնք սիրով «ուտում» եւ կարծես լա՞վ էլ «մարսում են»: Ի՞նչ պետք է սովորի (եւ արդեն ընդօրինակում է) աճող սերունդը այդ հեռուստահաղորդումներից: Դրանք կարելի էր փոքրիկ գրքույկների տեսքով տպել «Ապագա մարդասպանի համառոտ ձեռնարկ», կամ «Գողի հակիրճ դասընթաց» վերնագրերով: Կարծում եմ ավելի մանրամասնելու կարիք չկա: Ուստի մենք պարտավոր ենք հետեւել մեր մեծերի խոսքին եւ մեր օրը հեռուստացույցի դիմաց անցկացնելու փոխարեն, պարբերաբար կարդալ մեր իմաստուն նախնիների կողմից մեզ թողած գրավոր ժառանգությունը եւ կիրառել այն մեր ամենօրյա կենցաղում:

Պ. Սեւակի սեւ, ածխի պես այրվող, աչքերը տեսնում էին հեռուն եւ նրա ամբողջ պոեզիան ծառայում էր մեկ բանի՝ հայի մեջ հային արթնացնել, եւ առհասարակ՝ մարդու մեջ՝ մարդուն: Նրա ամբողջ պոեզիան տոգորված է սիրով, եւ դա տիեզերական Աստվածային սերն է՝ Հայրենիքի, հայրենի բնության, մոր, զավակների, կնոջ հանդեպ: Բայց սիրառատ Պարույրի սիրով ողողված պոեզիայի մեջ դուք չեք գտնի գեթ մեկ անվայելչություն: Եվ ի՞նչ եք կարծում, ինչպիսի՞ ցավ նա կապրեր, երբ իմանար, որ իր երազած եւ փափագած ազատ Հայաստանում՝ դպրոցին հենց դեմ դիմաց, մեծերի համար զվարճությունների ակումբ է բացվում, ուր կիսամերկ կանայք ձողի մոտ, ծառայելով սատանային, հրապուրում եւ, Խրիմյան Հայրիկի բառերով ասած «կտրում-տանում են հայ տղամարդուն թե՛ իր ընտանիքից, թե՛ հասարակությունից»: Այսօրվա երեւանյան փողոցներով զբոսնելիս ցավով վերհիշում եմ Վեհափառ Հայրապետի մեկ ա՛յլ տողեր, գրված մեկ դար առաջ. «,...ցուցամոլ շռայլությունն է նազելով շրջում՝ կարծելով թե իր հարստությունն Անգլիայի անսպառ ոսկին է...թող հայ տիկնայք քառասուն կանգուն հազարթերթիկ շրջազգեստը տասը կանգունի փոխեն»: Բայց վեհափառ հայրապետը չէր կարող պատկերացնել, որ իր խոսքը, որն ասված էր խնայողության եւ խելացի տնտեսվարության համար, ա՛յդ աստիճան բառացիորեն կհասկացվի եւ հայ տիկնայք եւ օրիորդներն իրենց շրջազգեստը ոչ թե տասը կանգունի կփոխեն, այլ «մի թիզ յուբկայի», այն էլ մեջքը եւ պորտը բաց: Ցավով եմ նայում կարճլիկ մորթե բաճկոնների մեջ կուչ եկած ձմեռային փողոցներով ինչ-որ տեղ շտապող ապագա մայր-աղջնակներին, որոնց ի սկզբանե գռեհի՛կ, ծայրահեղ ցածրագոտի շալվարների տակ փորձում է մի կերպ պատսպարվել ցրտից փշաքաղված եւ ո՛չ միայն ցրտից, այլ «տատու» կոչված թանաքի պատճառով, կապտած մաշկը: Եվ որպես այդ օտարամետ «մոդայի» հետեւանք շատանում են կանացի հիվանդությունները եւ երեւանյան կլինիկաներում լայն թափ են առնում արհեստական բեղմնավորման նոր մեթոդներով «վերարտադրողական ֆունկցիայի վերականգնման» տարբեր ծրագրեր: Այս առիթով միտս են գալիս Պ. Սեւակի մարգարեական տողերը՝

*«Էլեկտրոնական*
*Ու ճառագայթուն-անտիպակուց- կիկլոպյան բիբով*
*Հաշվեցե՛ք հատ ու թիվն ա՛յն մանուկների,*
*Որ կարող էինք ունենալ կյանքում,*
*Բայց մենք չունեցա՛նք ու չե՞նք ունենա:*
*Այսքանից հետո պիտի՛ որ հաշվեք,*
*Թե էլ ի՞նչ զենքեր ծնելուց հետո*
*Մայրը կզրկվի զավակ ծնելու կարողությունից»:*

Սթափվի՛ր, հայ աղջնակ, զենքը միայն ատոմային չի լինում, նա կարող է հանդես գալ եւ հրապուրիչ շրջազգեստի տեսքով, որը քայքայելով եւ տկարացնելով քո մարմինը, միաժամանակ խռովում եւ գայթակղում է քեզ նայող տղամարդկանց հոգիները: Բայց դա չի նշանակում, թե ուզում եմ բոլորիդ չադրա հագցնել: Ո՛չ, եւ հազար անգամ ո՛չ: Ինքը Պարույրը սիրում էր՝ այսպես ասած, «իր տուրքը տալ» փողոցներին.

*«Եվ ի՞նչ է ուզում սիրտս ապստամբ:*
*Թե չեք հասկանում՝*
*Դուրս եկեք փողոց»:*
*Իսկ այնտեղ՝ խնդրեմ, Թամանյանի հանճարով կերտած քարե սիմֆոնիա ուր.*

*«Մայիսյան արփին,*
*Տեսե՜ք,*
*Բազմահարկ շենքերի վրա*
*Իր նկարչության դասերն է տալիս», -իսկ.*
*«Քամին ձեւերն է քանդում ու կերտում*
*Կանանց հանդերձի գույներով զար-վառ:*
*Անցնում են, տեսե՜ք, կեցվածքներ պես-պես*
*Ձեւեր բյուրբազում:*
*Բոլորը՝ մսից - տաք ու մարդկային՝*
*Կրծքների ներքո ո՛չ թե պաղ մարմար,*
*Այլ մսի կտոր,*
*Որ կոչվում է սի՜րտ,*
*Կանանց աչքերում,*
*Տեսե՜ք,*
*Փլվել է ինքը երկինքը*
Ու ծիծաղում է...», բանաստեղծի տողերի միջոցով մեզ բացվում է տղամարդկանց հոգու գաղտնիքը՝ նրանք իրենց մեղմ ժպիտով արձագանքում են՝ ի պատասխան ձեր աչքերի ծիծաղին, եւ նրանց գերում է ո՛չ թե ձեր մարմնի պաղ մարմարը, այլ ձեր տա՜ք ու մարդկայի՜ն սի՛րտը, եւ հենց այդպիսի սրտերի համար են գրված Պարույրի հետեւյալ տողերը՝

*«Ես սեր եմ գրում՝*
*Հորդ ողողելով,*
*Ճիշտ այնպես էլ ես*
*բարության*
*...հորդ խոսք եմ թափում*
*Կեսլի կեսթափուր*
*Մարդկային սրտում»:*

Պարույր Սեւակի սիրտը բաբախեց 46 տարի, բայց նրա կարճ կյանքի ամեն վարկյանը՝ բոլորիս համար օրինակ է՝

«Թե ոնց պիտի ապրել կյանքում, թե ոնց պիտի նայել կյանքին,
Թե աշխարհում ինչն է էժան, թե աշխարհում ինչն է անգին»:

Սիրելինե՛ր, բազմողորմ Աստված իր շնորհառատ Աջով մեր ազգին բաշխել է հորիզոնից այն կողմ տեսնելու ունակությամբ օժտված մե՛ծ ուղեկիցներ, որոնց անունների միայն թվարկումը շոյում է ցանկացած հայի ականջ, իսկ նրանց թողած ժառանգությունը այնպիսի գանձ է, որ տարիներ են պետք այդ բոլորը վայելելու եւ կլանելու համար: Ուստի, ավելի հաճախ պատմենք մեր զավակներին նրանց մասին, թույլ չտանք, որ Աստվածային սառնորակ աղբյուրների ջրով լցված բաժակը ըմպելու փոխարեն մեր երեխաները արհեստածին նյութերից պատրաստված, ուրիշների բազմանուն կոլաները կուլ տան, օտարի՛ մշակույթը ընդօրինակելով ապրեն: Բայց, դա չի նշանակում թե առաջարկում եմ կրիայի պես միայն իր խեցու մեջ կղզիանալ եւ մասնակից չլինել համաշխարհային մշակույթի, գիտության, արվեստի զարգացման ընդհանուր հոսքին: Անշո՛ւշտ, պետք է Պարույր Սեւակի պես, ամեն վարկյան ՝ ձեռքը ժամանակի զարկերակի վրա պահել, որպեսզի «ես չմնա՜լ, չուշանա՜լ»: Բայց զարգանալ զուգահե՛ռ՝ հազարամյակների շրջադարձի նո՛ր փուլում պահպանելով մեր ազգայինը, չձուլվելո՛վ, չկորցնելո՛վ մեր ազգային առանձնահատկությունները քայլելով մե՛ր Մեծերի կողքին, որ ես չմնանք Նրանց բազմադարյան քայլից: Ջրենք մե՛ր Կենաց ծառը, հմուտ լողալ սովորենք մե՛ր «ժառանգության ծովում», որպեսզի չխեղդվենք համաշխարհային անհուն օվկիանում: Նորին Մեծություն Ժամանակը օգտագործենք աստվածահաճո, որովհետեւ նա իր անխնա՛ վերստուգող քննությանն է առնելու մեր ապրած կյանքի ամեն րոպեն: Ստա՛փ լինենք, թույլ չտանք, որ մեզ շեղեն սիրուն խաղալիքներով եւ քնացնեն բթացնող «սերիալների» միապաղաղ օրորի տակ, իսկ դրա համար մեզ ընդամենը պետք է լսել դեռ 1959 թ. հնչեցրած Պ.Սեւակի «անլռելի» զանգերի ղողանջները՝

*«...ով ականջ ունի,*
*բլթակ հավատ՝*
*նա պիտի՛ զգա*
*իմ եռաղողանջ զանգի ասմունքը,*
*իմ եռաբանյա ասքի ղողանջը,*
*իմ եռամատնյա խաչականքումի շնչող ստվերը»:*

**ԱԼԼԱ ՀԱԿՈԲՅԱՆ**
**24.01.2010թ. Զանգակատուն**

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

# Հայտնի դարձան ՀՕՖ-ի ԳԿՀԱՀ-ի 27 մրցանակակիրները

***«Եթե գիտության եւ տեխնիկայի բնագավառում մեր ժողովուրդը կարողանա առաջանալ մինչեւ մարդկության առաջին շարքերը, ապա հենց դրանով նա իր համար կստեղծի անսասանելի եւ անանց անկախություն:»***

**Վիկտոր Համբարձումյան**

1988-ի ավերիչ երկրաշարժից անմիջապես հետո Հայ առաքելական եկեղեցու ԱՄՆ-ի Արեւելյան թեմը ստեղծեց Հայ օգնության ֆոնդ (ՀՕՖ) բարեգործական կազմակերպությունը եւ սկսեց մարդասիրական օգնություն եւ ծրագրեր իրականացնել Հայաստանում եւ Արցախում: Իրականացրած այդ ծրագրերն ընդգրկում են հայաստանյան ներկա կյանքի գրեթե բոլոր ոլորտները՝ նպաստելով հայրենի երկրի հետագա առաջընթացին եւ մայր ժողովրդի բարեկեցության բարձրացմանը (ընդհանուր արժեքը կազմում է մոտ 300 մլն դոլար): ՀՕՖ-ի ծրագրերում մեծ տեղ են զբաղեցնում հայրենի գիտությունն ու կրթությունը: Հենց այդ ոլորտներին էր վերաբերում երեկ ՀՕՖ-ի հայաստանյան գրասենյակում կազմակերպված միջոցառումը: Ներկա էին Հայաստանի ՀՕՖ-ի մասնաճյուղի փոխտնօրեն Մարգարիտ Փիլիպոսյանը, գիտության եւ կրթության ծրագրերի համակարգող Էդուարդ Կարապետյանը, մամուլի խոսնակ Լեւոն Լաճիկյանը, տնօրեն Բագրատ Սարգսյանը, 2010 թվականի մրցանակակիրները եւ լրագրողներ:

ՀՕՖ-ի հայաստանյան մասնաճյուղի տնօրեն **Բագրատ Սարգսյանը** շնորհավորելով տարվա մրցանակակիրներին նշեց, որ տաս տարի առաջ Նյու Յորքում ՀՕՖ-ի հովանու ներքո ստեղծված Գիտության եւ կրթության հայկական ազգային հիմնադրամը (ԳԿՀԱՀ), իր առջեւ հատուկ նպատակ դրեց կասեցնել մտավոր ներուժի արտահոսքը Հայաստանից՝ գործուն աջակցություն ցուցաբերելով թե՛ գիտության բնագավառում առաջին լուրջ քայլերն անող երիտասարդներին, թե՛ վաստակաշատ ու փորձառու գիտական այրերին: «Իհարկե, հիմնադրամի կողմից հատկացվող 5000 դոլար դրամաշնորհը այնքան էլ մեծ գումար չէ, որը թույլ տար ռեալ, լայնածավալ գիտական հետազոտություններ անել, բայց մեր առաջնային նպատակն է մեր առաջատար գիտնականների համար նորմալ աշխատանքային պայմաններ ստեղծել եւ իհարկե աջակցել գիտական ներուժին ու կանխել նրանց արտահոսքը Հայաստանից», նշեց պրն Սարգսյանը: Ամփոփելով հիմնադրամի 10 տարիների գործունեությունը, Բագրատ Սարգսյանը նշեց, որ 235 գիտական խմբեր են արժանացել դրամաշնորհին, որոնցում ներգրավված են շուրջ 1000 գիտնականներ: Դրամաշնորհների ընդհանուր գումարը կազմել է 1 միլիոն 170 հազար դոլար: 2010 թվի մրցույթին 200 ներկայացված հայտերից հաղթող են ճանաչվել 27 թեմաներ: Հետազոտական հանձնախմբի նախագահ, ամերիկահայ նշանավոր աստղաֆիզիկոս, Քորնելի համալսարանի պրոֆեսոր **Երվանդ Թերզյանը** տեղեկացրել է, որ մոտ 50 թեմաներ արժանի են եղել դրամաշնորհի, սակայն ընտրվել են լավագույնները՝ մրցանակային ֆոնդի սահմանափակ լինելու պատճառով: 27 դրամաշնորհներից 26-ը տրամադրել է Նյու Յորքից հայազգի գիտնական **Արմեն Ավանեսյանցը**: Հաղթողները հիմնականում բնագիտական բնագավառից են՝ քիմիա, ֆիզիկա, աստղաֆիզիկա, կենսաբանություն: Մի քանիսն են միայն հնագիտության, սոցիոլոգիայի եւ պատմության, հումանիտար ոլորտից: Դրամաշնորհի արժանացած գիտնականների թվում 8-ը կանայք են, մնացածը տղամարդ, որոնցից 15-ը՝ երիտասարդ: Հատկանշական է, որ գիտնականներից երկուսն արդեն 5-րդ անգամ են արժանանում դրամաշնորհի:



Հաղթողներին հավաստագրեր հանձնելով պրն Սարգսյանը մաղթեց նորանոր հաջողություններ ու արժեքավոր գյուտեր: Մրցանակակիրների անունից շնորհակալություն հայտնեց **Արթուր Արամյանը**: Ուրախալի է, որ մրցանակակիրներից 5 երիտասարդներ մինչեւ 26 տարեկան են, որը փաստում է, որ երիտասարդները, չնայած դժվարություններին, համալրում են մեր երկրի գիտնականների շարքերը:

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

AZG NEW PDF.qxd 1/27/2010 11:03 PM Page 1



# Դավիթ Ֆահրադյանի նվաճումը գրանցվեց Գինեսի ռեկորդների գրքում

Անցյալ տարվա հուլիսի 21-ին Հրանտ Շահինյանի անվան մարմնամարզության օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի մարզադահլիճում Երեւանի Վալերի Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի (ԵրՊԼՀ) ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի դասախոս, ՀՀ վաստակավոր մարզիչ **Դավիթ Ֆահրադյանը** Գինեսի ռեկորդների գրքում գրանցման ենթակա ռեկորդ սահմանեց՝ 10 րոպե 30 վրկ-ում պտտաձողի վրա 350 պտույտ կատարելով: Օգոստոսի 28-ին ռեկորդի սահմանման տեսանյութն ու անհրաժեշտ բոլոր փաստաթղթերն ուղարկվել էին Լոնդոն: Եվ ահա երկարատեւ սպասումից հետո Լոնդոնից վերջապես օրերս ստացվել էր ուրախալի լուրը՝ Դավիթ Ֆահրադյանի նվաճումը պաշտոնապես գրանցվել էր Գինեսի ռեկորդների գրքում:




Ուրախալի այս իրադարձության առիթով երեկ ԵրՊԼՀ-ի նիստերի դահլիճում բուհի ռեկտոր Սուրեն Զոլյանը, ֆիզկուլտուրայի ամբիոնի վարիչ Խաչատուր Թեւոսյանը, Դավիթ Ֆահրադյանն ու «Արտասովոր շարժողական գործունեության գրանցման» հանձնաժողովի նախագահ Վարդան Թովմասյանը հանդիպեցին լրագրողներին: **Սուրեն Զոլյանը** շնորհավորելով Դավիթին, նշեց, որ վերջինս ապացուցեց, թե որքան մեծ են մարդկային հնարավորությունները: Նա ռեկորդի սահմանման վերաբերյալ հավաստագիրը հանձնեց Դավիթին, նշելով, որ շնորհանդեսը կկազմակերպվի, երբ համալսարանում կվերսկսվեն դասերը:

«Ամեն մարդ կյանքում մի նպատակ ունի: Անչափ ուրախ եմ, որ հաջողվեց գրանցվել Գինեսի ռեկորդների գրքում: Ես դա արել եմ իմ ազգի, մեր համալսարանի պատվի համար: Շնորհակալ եմ բոլոր նրանցից, ովքեր աջակցեցին ռեկորդի սահմանմանն ու գրանցմանը: Բավական բարդ ճանապարհ եմ անցել: Անցած տարվա փետրվարից նախապատրաստվում էի ռեկորդի սահմանմանը: Օրական 2 պարապմունք էի անցկացնում, քրտնաջան մարզվում էի, իսկ պտտաձողի վրա այդ վարժությունը փորձում էի շաբաթական մեկ անգամ, քանի որ վերականգնողական գործընթացը շատ դժվար է տեղի ունենում: Աստիճանաբար մեծացնում էի մարզումների ծանրաբեռնվածությունը: Ընդհանուր առմամբ պետք է դիմացկուն լինես, ամուր ձեռքեր եւ սիրտ-անոթային համակարգ ունենաս», իր խոսքում նշեց Դավիթ Ֆահրադյանը:

**Վարդան Թովմասյանը** տեղեկացրեց, որ տարեկան միջինը 60 հազար ռեկորդի սահմանման հայտ է ներկայացվում Գինեսի ռեկորդների գրքի հանձնախմբին, որոնցից 4-5 հազարն է գրանցում ստանում: Ըստ Թովմասյանի, Գինեսի գրքում գրանցվելը ռեկորդակիրին ոչ մի պարգեւավճար չի նախատեսում:

**Խաչատուր Թեւոսյանն** էլ տեղեկացրեց, որ Գինեսի ռեկորդների գրքում գրանցվելու համար հատուկ կանոններ են գործում, որոնք խիստ պահանջներ են ներկայացնում ռեկորդ սահմանել ցանկացողներին: Օրինակ, ռեկորդի սահմանման ժամանակ նվազագույնը 3 հոգի վկա պետք է լինի, որոնք միմյանց չպետք է ճանաչեն: Նրանց վկայությունները պետք է հաստատվեն նոտարիուսով: Տեսախցիկը պետք է անպայման սիրողական լինի, հաշվետվությունը բաղկացած լինի 8 թերթից, որում պետք է նշված լինեն գործիքների տեխնիկական տվյալները եւ այլն: Այնպես որ անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի ճիշտ ձեւակերպումը բավական բարդ եւ աշխատատար գործընթաց է:

Դավիթ Ֆահրադյանը Գինեսի ռեկորդների գրքում գրանցված Հայաստանի 7-րդ ներկայացուցիչն է: Մինչ այդ, վերջին անգամ այդ գրքում գրանցվել էր **Արտակ Գրիգորյանը** 2002-ին («Ազգը» ժամանակին հանգամանորեն անդրադարձել է Արտակի նվաճումներին):

Հայաստանի առաջին ներկայացուցիչը Գինեսի ռեկորդների գրքում եղել է **Գրիգոր Մարգարյանը**, որը 1990-ի հոկտեմբերի 30-ին ֆուտբոլի գնդակը ոտքով եւ գլխով խաղալով, առանց վայր գցելու 7 ժամ 50 րոպեում անցել է 37 կմ 174 մետր:

Հաջորդը **Ռոբերտ Գալստյանն** է, որը 1991-ին պարանի օգնությամբ ատամներով քաշել է «Կրազ» մակնիշի ավտոմեքենան (12 տոննա) 10 մետր: Հաջորդ տարի նա նույն եղանակով քաշել է 2 վագոն (219 տոննա 175 կգ) 7 մետր, որից հետո այն իներցիայով շարժվել է եւս 4,5 մետր:

1998-ին **Սամվել Խաչատրյանը** մեջքին պառկած դրությունից 3 կգ կցագնդերը (յուրաքանչյուր ձեռքում) հրել է դեպի վեր 100 հազար անգամ, 25 ժամում:

**Անդրանիկ Միքայելյանը** կանգնած վիճակում կցագնդերով (8 կգ 20 գրամ) ձեռքերի տարածակարգ հերթագայումով 90 րոպեում յուրաքանչյուր ձեռքով 5271 անգամ կատարել է վարժությունը:

**Մարտուն Իվանյանը** 1995-ին 1 ժամում 5230 կքանիստ է կատարել:

# Անկախ Ադրբեջանի վճռից, հայկական հավաքականը հանդես կգա Բաքվում

Ինչպես հայտնի է, փետրվարի 13-14-ին Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում կանցկացվի հունահռոմեական ոճի ըմբշամարտի աշխարհի գավաթի խաղարկությունը, որին պետք է մասնակցեն Հայաստանի, Ռուսաստանի, Թուրքիայի, Իրանի, Վրաստանի, Կուբայի, Ադրբեջանի եւ Հունգարիայի հավաքականները:



Այդ միջոցառմանն էր նվիրված երեկ «Անի» հյուրանոցում կազմակերպված մամուլի ասուլիսը, որին ներկա էին ՀԱՕԿ-ի փոխնախագահ, «Հայաստան» մարզական միության նախագահ **Ռազմիկ Ստեփանյանն** ու Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիայի փոխնախագահ **Հրանտ Ենոքյանը**: Նրանք նշեցին, որ մրցաշարը Երեւանում անցկացնելու որոշումը կայացվել է տարեվերջին ՖԻԼԱ-ի նախագահի Հայաստան այցելության ժամանակ, ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկյանի եւ ըմբշամարտի հանրապետական ֆեդերացիայի նախագահ Սամվել Կարապետյանի հետ բանակցությունների արդյունքում:

Մրցաշարը բարձր մակարդակով անցկացնելու նպատակով ստեղծվել է կազմկոմիտե ըմբշամարտի Հայաստանի ֆեդերացիայի նախագահի առաջին տեղակալ Հովհաննես Սոխոյանի գլխավորությամբ: Պետբյուջեով այս մրցաշարի անցկացման համար գումար չի նախատեսված: Անհրաժեշտ շուրջ 600 հազար դոլար գումարը կտրամադրեն Սամվել Կարապետյանն ու Գագիկ Ծառուկյանը: Այն կծախսվի միջազգային չափանիշներին համապատասխանող մարզագույքի, անհրաժեշտ էլեկտրոնային սարքավորումների ձեռքբերման, ինչպես նաեւ մրցանակակիրներին պարգեւատրելու համար:

Մրցաշարի մասնակից թիմերը կհանգրվանեն «Անի» հյուրանոցում, մրցավարները՝ «Արարատում», իսկ ՖԻԼԱ-ի ներկայացուցիչներին կտրամադրվի «Արմենիա-Մարիոթը»: Պատվիրակության անդամների համար նախատեսված է մշակութային ծրագիր:

Ինչ վերաբերում է Ադրբեջանի հավաքականի Երեւան ժամանելչժամանելուն, Ռազմիկ Ստեփանյանը նշեց, որ այդ հարցով իրենք առայժմ պաշտոնական գրություն չեն ստացել ըմբշամարտի միջազգային ֆեդերացիայից: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը հունվարի 30-ն է: Այդ ժամանակ էլ հայտնի կդառնա մասնակիցների վերջնական կազմը: Եթե Ադրբեջանը հրաժարվի, ապա մրցաշարին կմասնակցի Դանիայի, Ուզբեկստանի կամ Շվեդիայի հավաքականը: Առայժմ պարզ չէ նաեւ, թե որպես կազմակերպիչ երկիր արդյոք Հայաստանի հավաքականին կթույլատրե՞ն քաշային 7 կարգերից յուրաքանչյուրում 2-ական ըմբիշ ընդգրկել: Փետրվարի 11-ին տեղի կունենա մասնակիցների վիճակահանությունը: Թիմերը կբաժանվեն 2 խմբի, որոնցում համապատասխան տեղեր զբաղեցրած հավաքականները եզրափակիչ փուլում կմրցեն միմյանց հետ: Նշվեց նաեւ, որ անկախ այն բանից, թե Ադրբեջանը կժամանի Երեւան, թե ոչ, Հայաստանի հավաքականը մասնակցելու է ապրիլին Բաքվում կայանալիք ըմբշամարտի Եվրոպայի առաջնությանը:

ՖՈՒՏԲՈԼ

# Ավետիք Գրիգորյանը շարունակեց հաղթարշավը

**Շախմատի Հայաստանի առաջնությունում կայացան 6-րդ տուրի հանդիպումները: Տղամարդկանց մրցաշարում առաջատարի դիրքն ամրապնդեց Ավետիք Գրիգորյանը, որը 3-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց: Պարտության մատնելով Ռոբերտ Հովհաննիսյանին, Գրիգորյանը վաստակեց 5 միավոր: Նրան մեկ միավոր է զիջում Տիգրան Պետրոսյանը, որը հաշտություն կնքեց Արթուր Չիբուխչյանի հետ: Դա տուրում գրանցված միակ ոչ-ոքին էր: 3,5 միավորով 3-րդ տեղում է Արտաշես Մինասյանը, որը պարտվեց Հրանտ Մելքումյանին:**

**Տուրն անհաջող էր նաեւ Զավեն Անդրեասյանի համար, որը տանուլ տվեց Դավիթ Պետրոսյանի հետ մրցավեճը: Տիգրան Քոթանջյանն էլ առավելության հասավ մրցաշարի հետնապահ Դավիթ Քալաշյանի նկատմամբ: Անդրեասյանը, Մելքումյանն ու Չիբուխչյանը վաստակել են 3-ական միավոր: Դավիթ Պետրոսյանն ու Հովհաննիսյանն ունեն 2,5-ական, Քոթանջյանը՝ 2 միավոր: Աղյուսակը 1,5 միավորով եզրափակում է Քալաշյանը:**

**Կանանց մրցաշարում կենտրոնականը երկու առաջատարների մրցավեճն էր: Հաղթելով Սիրանուշ Անդրեասյանին, Լիա Մկրտչյանը վաստակեց 4,5 միավոր եւ միանձնյա գլխավորեց աղյուսակը: Անդրեասյանը Նարինե Գասպարյանի հետ առաջատարից հետ են մնում կես միավորով: Նարինեն հաղթեց Անի Խանամիրյանին, որը 3,5 միավորով 4-րդ հորիզոնականում է: 3-ական միավորով հաջորդ տեղերում են Մարիանա Գասպարյանն ու Անահիտ Խառատյանը: Նրանց մրցավեճն ավարտվեց Անահիտի հաղթանակով:**

**5 անընդմեջ պարտություններից հետո վերջապես առաջին միավորը վաստակեց Վարդուհի Քալաշյանը՝ հաղթելով Լուսինե Կարապետյանին: Կանանց մրցաշարում էլ միայն մեկ պարտիա խաղաղ ելք ունեցավ: Հաշտություն կնքեցին Աննա Հայրապետյանն ու Նաիրա Մովսիսյանը:**

# «Փյունիկի» առաջին հաղթանակը

**Սոչիում ուսումնամարզական հավաքում գտնվող «Փյունիկը» ստուգողական առաջին հանդիպումն անցկացրեց: Հայաստանի չեմպիոնը 3-0 հաշվով հաղթեց տեղի «Սոչի-04»-ին: 2 գոլ խփեց Գեւորգ Ղազարյանը, մեկ անգամ աչքի ընկավ Մարկոսը: Սոչիում «Փյունիկը» եւս 2 խաղ կանցկացնի:**

# Խաղացանկը հայտնի է

**Ինչպես տեղեկացրել ենք, Երեւանում այսօր կմեկնարկի բասկետբոլի մրցաշար 3 թիմերի մասնակցությամբ, որոնք կխաղարկեն «Հ1-Վիվասել ՄՏՍ»-ի գավաթը: Հայտնի է դարձել մրցաշարի խաղացանկը: Ժամը 15-ին տեղի կունենա մրցաշարի բացման արարողությունը, իսկ 15 րոպե անց կկայանա «Հատիսի» եւ Վրաստանի հավաքականի հանդիպումը: Հունվարի 29-ին «Հատիսը» կմրցի Բեյրութի ՀՄԸՄ-ի հետ: Խաղը կսկսվի ժամը 17-ին: Մրցումների վերջին օրը՝ հունվարի 30-ին ժամը 18-ին կսկսվի Վրաստանի հավաքականի եւ ՀՄԸՄ-ի մրցավեճը: «Միկա» մարզաւրահ մուտքն ազատ է:**

# Կրամնիկը հավասարվեց Շիրովին

**Մեկօրյա հանգստից հետո Վեյք Ան Զեեի շախմատի մրցաշարի մասնակիցները կրկին նստեցին խաղասեղանների շուրջը: Ոչ մի կերպ ուշքի չի գալիս Վարուժան Հակոբյանը, որը 9-րդ տուրում նոր պարտություն կրեց՝ զիջելով չինացի շախմատիստ Նի Հուային: Հակոբյանը 2 միավորով եզրափակում է աղյուսակը:**



**Աղյուսակը շարունակում է գլխավորել Անիշ Գիրին, թեեւ 9-րդ տուրն անհաջող էր նրա համար: Գիրին անդրանիկ պարտությունը կրեց՝ զիջելով մրցաշարի միակ կին մասնակից Աննա Մուզիչուկին: Գիրին ունի 6,5 միավոր: 6-ական միավոր են վաստակել Նի Հուան եւ Էրվին Լ' Ամին: Վերջինս հաղթեց Դեւիդ Հաուելին:**

**Բավական հետաքրքրական պայքարում է անցնում ուժեղագույնների մրցաշարը: Այստեղ 9 տուրից հետո երկիշխանություն է: 6,5-ական միավորով առաջատարներն են Ալեքսեյ Շիրովն ու Վլադիմիր Կրամնիկը: Շիրովը հաշտություն կնքեց Իվանչուկի հետ, իսկ ահա Կրամնիկը սեւերով հաղթեց Կառլսենին: Վերջինս Կարյակինի հետ ունի 5,5 միավոր: Կարյակինն էլ հաղթանակով ավարտեց Նակամուրայի հետ պարտիան: Արդյունավետ ելք ունեցան նաեւ Սմիթս-Կարուանա եւ Վան Վելի-Լեկո պարտիաները, որոնցում հաղթեցին սպիտակները: Շորթ-Դոմինգես, Տիվյակով-Անանդ պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի:**

# Ռուսները դուրս մնացին պայքարից

**Թենիսի Ավստրալիայի բաց առաջնության քառորդ եզրափակիչ հանդիպումներն անհաջող էին ռուսների համար: Պայքարը շարունակող 3 թենիսիստներն էլ պարտություն կրեցին:**

**Տղամարդկանց մրցաշարում կենտրոնականը Նիկոլայ Դավիդենկոյի եւ Ռոջեր Ֆեդերերի մրցավեճն էր, որում հաղթեց շվեյցարացի թենիսիստը (2-6, 6-3, 6-0, 7-5): Կիսաեզրափակիչում Ֆեդերերը կմրցի Ժո-Վիլֆրեդ Տսոնգայի հետ, որը դժվարին պայքարում, 5 խաղափուլում հաղթեց Նովակ Ջոկովիչին: Մյուս զույգը կկազմեն Մարին Չիլիչն ու Էնդի Մարեյը: Չիլիչը հաղթեց Էնդի Ռոդդիկին, իսկ Մարեյը Ռաֆայել Նադալի հետ մրցախաղը չավարտեց: Նա շահել էր 2 խաղափուլերը, 3-րդում հաղթում էր 3-0 հաշվով, երբ Նադալը վնասվածքի պատճառով հրաժարվեց մրցակցությունից:**

**Կանանց մրցապայքարում եւս անհաջողության մատնվեցին Ռուսաստանի ներկայացուցիչները: Նադեժդա Պետրովան զիջեց Ժյուստին Էնենին (6-7, 5-7), Մարիա Կիրիլենկոն պարտվեց Չժեն Ցզեին (1-6, 3-6): Սերենա Ուիլյամսը հաղթեց Վիկտորիա Ազարենկոյին, իսկ նրա քույրը՝ Վինուսը պարտվեց Լի Նային:**

# Մեկնարկը տրվեց

**Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում երեկ մեկնարկեց բռնցքամարտի Հայաստանի մեծահասակների առաջնությունը: Քաշային 11 կարգերում մրցավեճի կբռնվեն 99 բռնցքամարտիկներ: Բռնցքամարտի հանրապետական ֆեդերացիայի փոխնախագահ Դերենիկ Գաբրիելյանի բացման խոսքից հետո սկսվեցին նախնական փուլի մենամարտերը: Առաջնության մրցանակակիրները հայտնի կդառնան հունվարի 31-ին: Առաջնության արդյունքներով կկազմավորվի բռնցքամարտի Հայաստանի հավաքականը, որը կնախապատրաստվի Մոսկվայում կայանալիք Եվրոպայի առաջնությանը:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# ԱԱԽ քարտուղարն ընդունել է Մանուչեհր Մոթաքիին եւ ԵԱՀԿ պատվիրակությանը

ԱԱԽ քարտուղար **Արթուր Բաղդասարյանը** հունվարի 27-ին ընդունել է Իրանի արտգործնախարար **Մանուչեհր Մոթաքիին**: Քննարկվել են երկկողմ համագործակցությանն առնչվող հարցեր: Երկուստեք նշվել է, որ հայ-իրանական դարավոր բարեկամությունը պետք է առավել ամրապնդել Հայաստանի եւ Իրանի միջեւ տարբեր ուղղություններով՝ հարաբերությունների ընդլայնմամբ ու խորացմամբ: Կողմերը կարեւորել են տարածաշրջանային անվտանգության ամրապնդման ուղղությամբ հայ-իրանական համագործակցության զարգացումը: Արթուր Բաղդասարյանն ընդգծել է Հայաստան-Իրան երկաթգծի եւ ավտոմայրուղու կառուցման, էներգետիկ ոլորտում առկա երկկողմ պայմանավորվածությունների լիարժեք իրականացման կարեւորությունը:

Զրուցակիցներն անդրադարձել են նաեւ հայ-թուրքական հարաբերությունների եւ ԼՂ հիմնախնդրի կարգավորման՝ վերջին շրջանի զարգացումներին: Հյուրի խնդրանքով Արթուր Բաղդասարյանը ներկայացրել է այս խնդիրների վերաբերյալ հայկական կողմի տեսակետը՝ վերահաստատելով, որ Հայաստանը կողմնակից է տարածաշրջանում կայունության եւ խաղաղության ամրապնդմանը, հարեւանների հետ հարաբերությունների կարգավորմանը: Քննարկվել են նաեւ տարածաշրջանային զարգացումներին վերաբերող հարցեր:

Նույն օրը ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանն ընդունել է ԵԱՀԿ պատվիրակությանը Ղազախստանի քաղաքական պլանավորման կոմիտեի նախագահ Տալգաս Կալիեւի գլխավորությամբ:

**Տալգաս Կալիեւը** ներկայացրել է Ղազախստանի կողմից ԵԱՀԿ նախագահության ընթացքում իրականացվելիք քայլերը եւ ընդգծել, որ որպես ԵԱՀԿ նախագահող երկիր Ղազախստանը հատուկ ուշադրություն է դարձնում կովկասյան տարածաշրջանին:

Հանդիպման ընթացքում քննարկվել են ԵԱՀԿ շրջանակում Հայաստանի եւ Ղազախստանի համագործակցությանը վերաբերող հարցեր: Արթուր Բաղդասարյանը վստահություն է հայտնել, որ Ղազախստանի նախագահության շրջանում ԵԱՀԿ աշխատանքն ավելի կակտիվանա: Նա նշել է, որ Հայաստանը կողմ է տարածաշրջանում երկարատեւ խաղաղության ու կայունության հաստատմանը:

Տալգաս Կալիեւը տեղեկացրել է, որ փետրվարին տարածաշրջան, այդ թվում՝ Հայաստան կայցելի ԵԱՀԿ գործող նախագահը:

**Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի մամուլի գրասենյակ**

# «ՀայՌուսգազարդ»-ը պարզաբանում է գազի սակագների փոփոխությունը

## «ՀայՌուսգազարդ»-ն առաջարկել է հնարավոր ցածր սակագին

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ն ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին է ներկայացրել հանրապետությունում գործող բնական գազի սակագների վերանայման հայտը՝ հիմք ընդունելով ներկրման գնի փոփոխությունը ընթացիկ տարվա ապրիլի 1-ից սկսած: Նշված փոփոխությունը նախատեսված է «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ եւ ՌԴ «Գազպրոմ էքսպորտ» ՍՊԸ միջեւ ստորագրված բնական գազի առուվաճառքի երկարաժամկետ պայմանագրով, որի հիմնական պայմանը բնական գազի գների աստիճանական բարձրացումն է՝ համապատասխանեցնելով դրանք միջազգային գներին:

Ի տարբերություն այլ երկրների, որտեղ վառելիքի արժեքի թանկացումը կտրուկ բնույթ է կրում, առաջա տարիների ընթացքում ներկրվող գազի գնի աստիճանաբար աճի ապահովագրումը Հայաստանի համար լուրջ հնարավորություն է ստեղծում խուսափել գնային կտրուկ ցնցումներից եւ պահպանել համեմատաբար կայուն եւ պլանային վիճակ տնտեսության մեջ, միաժամանակ բաժանորդների համար ապահովելով բարձր սակագնի անցման ավելի մեղմ ընթացք:

Ավելին, ներկրման պայմանագրի համաձայն, 2010թ. ապրիլի 1-ից մինչեւ 2011թ. մարտի 31-ը ներառյալ բնական գազի գնման գին էր սահմանվել 200 ԱՄՆ դոլար/հազ.խմ, ներկայիս 154 ԱՄՆ դոլար/հազ. խմ փոխարեն: ՀՀ Նախագահի գործուն միջամտության շնորհիվ նշված գինը հաջողվեց իջեցնել եւ սահմանել 180 ԱՄՆ դոլար/հազ.խմ:

2010թ. համար Հայաստանի Հանրապետություն ներկրվող բնական գազի միջին տարեկան գնման գինը կկազմի 170 ԱՄՆ դոլար/հազ.խմ: Համեմատության համար նշենք, որ այսօր գործող բացառիկ գին է Բելառուսի օրինակը, որտեղ այն կազմում է 186-190 ԱՄՆ դոլար:

Ներկայումս «ՀայՌուսգազարդ» -ի ծառայություններից օգտվում է 600 հազար ընտանիք եւ ընկերությունը ձգտում է անել հնարավորը յուրաքանչյուր բաժանորդի պահանջները բավարարելու, ընկերության նկատմամբ նրա վստահության մակարդակը բարձրացնելու համար: Ծառայությունն այսօր ունի սոցիալական լուրջ բաղկացուցիչ եւ Ընկերությունն ավելի քան շահագրգիռ է, որպեսզի բնական գազի գինը մատչելի լինի սպառողների համար, հատկապես, երբ դեռ չենք հաղթահարել ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամի ծանր հետեւանքները:

Այդ հետեւանքը «ՀայՌուսգազարդ» -ի համար արձանագրեց սպառման ծավալների 20 տոկոս նվազում, որի արդյունքում Ընկերությունը կորցրեց պլանավորված եկամուտների զգալի մասը եւ ֆինանսական տարին փակեց վնասով, ինչը, սակայն, չխանգարեց, որպեսզի Ընկերությունը մնա հանրապետության խոշոր հարկատուներից մեկը:

Համաձայն կանխատեսումների, իրացման ծավալների նվազման միտումը կպահպանվի նաեւ ընթացիկ տարում: Հաշվի առնելով իրացման շուկա կորցնելու հնարավոր վտանգը, Ընկերության կողմից առաջարկվել է հնարավոր ցածր սակագին, որը նախորդ տարվա վնասների փոխհատուցում չի նախատեսում, այլ ընդամենը համակարգը եւ շուկան պահելու խնդիր է դնում: Առաջարկվող սակագինն էապես ցածր է այն սակագնից, որն անհրաժեշտ է գազամատակարարման համակարգի զարգացման անհրաժեշտ մակարդակի ապահովման եւ տնտեսագիտորեն հիմնավորված բոլոր ծախսերի փոխհատուցման համար: Նույնիսկ այս պարագայում սակագինը կարող է բեռ լինել սպառողների համար, սակայն գնի ձեւավորումը ինքնին տնտեսական կատեգորիա է եւ ծառայությունը իրական գնից տեւականորեն ցածր լինել չի կարող:

Գործող սակագների պայմաններում վաճառքի միջին սահմանված սակագինը կազմում է 246.9 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, իսկ առաջարկվողում՝ 293.35 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, կամ աճը՝ շուրջ 19%, այն դեպքում, երբ գազի գնման գնի աճը կազմում է 17%: Այդուհանդերձ 2% աճի տարբերությունը «գերշահույթ» չի նշանակում, այլ ընդամենը ուղղված է հաստատուն ծախսերի փոխհատուցմանը եւ արձագանք է իրացման շուկայի կրճատմանը: Չհաշված նաեւ այն փաստը, որ վաճառքի գնից է բյուջե փոխանցվում ավելացված արժեքի հարկը:

Ինչ վերաբերում է բնակչության եւ խոշոր սպառողների սակագների տարբերությանը, ապա դա պայմանավորված է նրանց բաժին ընկնող շահագործման եւ պահպանման ծախսերի չափով եւ իրացված գազի ծավալներով: Մասնավորապես, ընդհանուր ծախսերի շուրջ 65%-ը բաժին է ընկնում բնակչության հատվածին, այն դեպքում, երբ սպառողների այդ խմբի կողմից սպառվում է իրացված գազի ընդհանուր ծավալի 36%-ը: Գազի գների նշված տարբերակումն առկա է եւ կիրառվում է աշխարհի բազմաթիվ երկրներում:

Լինելով խոշոր հարկատուներից մեկը եւ ունենալով խոշորագույն ներդրումային փաթեթը հանրապետությունում, «ՀայՌուսգազարդ»-ը մշտապես հետաքրքրված է երկրի սոցիալ-տնտեսական, մասնավորապես էներգետիկայի բնագավառի կայուն զարգացմամբ,հետեւաբար սակագնի փոփոխությունները երբեք ինքնանպատակ չեն Ընկերության համար:

ՃԱՆՈՒՑՈՒՄ

## «Յունիբանկ»-ը ներկայացնում է նոր ավանդ

## *«Հաղթենք միասին»*

*Ավանդատուների միջեւ կխաղարկվի Արթուր Աբրահամի մենամարտի հրավիրատոմս*

Այս տարվա հունվարի 26-ից մինչեւ ապրիլի 30-ը «Յունիբանկ»-ը կընդունի նոր ավանդատեսակ՝ «Հաղթենք միասին»: Այս ավանդը ներդրած հաճախորդների միջեւ ամռանը կկայանա նվերների խաղարկություն, որի գլխավոր մրցանակը Արթուր Աբրահամի հաջորդ մենամարտի հրավիրատոմսն է: Դեպի Գերմանիա ուղեւորության հետ կապված բոլոր ծախսերը կհոգա «Յունիբանկ»-ը:

«Հաղթենք միասին» ավանդն ընդունվում է 365 օր ժամկետով ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով կամ եվրոյով: Ավանդի տարեկան տոկոսադրույքը կազմում է ՀՀ դրամի դեպքում 11,5%, ԱՄՆ դոլարի եւ եվրոյի դեպքում, համապատասխանաբար, 9% եւ 8%: Ավանդի նվազագույն գումարը կազմում է 300 հազար դրամ կամ 1000 դոլար/եվրո: Տոկոսագումարի վճարումն իրականացվում է ավանդատուի ցանկությամբ՝ ավանդի գործողության ժամկետի վերջում կամ ամեն ամիս: Ավանդատուներին ընձեռվում է նաեւ օվերդրաֆտի ստացման հնարավորություն՝ ներդրված գումարի 80%-ի չափով:

«Հաղթենք միասին» ավանդի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն կարելի է ստանալ զանգահարելով «Յունիբանկ»-ի թեժ հեռախոսակապի կենտրոն՝ 85-80 հեռախոսահամարով կամ այցելելով բանկի կայքէջը՝ **www.unibank.am**:

# «Վարդանյանների ընտանիք» բարեգործական հասարակական կազմակերպությունը կատարեց 38 միլիոն ՀՀ դրամի նվիրատվություն

## «Հայաստան» համահայկական հիմնադրամը շարունակում է դրամահավաքը

«Հայաստան» համահայկական հիմնադրամը տեղեկացնում է, որ «Վարդանյանների ընտանիք» բարեգործական հասարակական կազմակերպությունն այսօր կատարեց 38 միլիոն ՀՀ դրամի նվիրատվություն՝ գումարը փոխանցելով Հիմնադրամի բանկային հաշվին:

Նախորդ տարի գործարար ընտանիքի նվիրաբերած գումարով ԼՂՀ Մարտունու շրջանի Գիշի գյուղում կառուցվում է երկհարկանի դպրոց՝ նախատեսված 300 աշակերտի համար: (Ծրագրի մանրամասները տես Հիմնադրամի կայք-էջում՝ www.himnadram.org)

«Բարեգործությունը չի սահմանափակվում կոնկրետ դրամահավաք միջոցառումներով. մեր հանրության կողմից ժողովրդականություն վայելող այս գործարար ընտանիքի ներդրումը Հիմնադրամի աշխատանքներում ու ծրագրերում մեծ խթան է թե՛ մեզ, եւ թե՛ մեր առաջիկա աշխատանքների համար: Այսօրվա նվիրատվությունը վկայում է այն մասին, որ բարի գործերի համար չկան հատուկ օրեր, եւ Հիմնադրամը մշտապես ողջունում է հայ գործարարների մասնակցությունն իր բարեգործական ծրագրերին: Շնորհակալություն եմ հայտնում Վարդանյանների ընտանիքին համահայկական ծրագրին աջակցելու համար»,- ասում է «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն **Արա Վարդանյանը**:

*«Հայաստան» համահայկական հիմնադրամ*

## Մրցույթի հրավեր 013/10/PRO

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը հայտարարում է մրցույթ՝ **ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղամասար համայնքին** հացահատիկային կոմբայն մատակարարելու համար:

Մրցույթի հրավերին մանրամասն կարելի է ծանոթանալ ՄԱԶԾ-ի **http://www.undp.am** ինտերնետային կայքից կամ գնումների բաժնից Երեւան, Պետրոս Ադամյան 14 հասցեում:

Դիմել Գրիգոր Ախնոյանին՝ հեռ. 56 60 73+126 (ներքին), ժամը 14:00-16:00-ը:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝ ս.թ. փետրվարի 10, ժամը 17:00:

## ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

